Հասարակ

ՀՅԴ Պատմական

ԴՐՕՇԱԿ

Օգոստոս N02 (1623) 2010

ԵՐԵՎԱՆ-2010 ԱՄՍԵՐԱՅԻՆ

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմական թերթ

«Դրօշակ»
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**

Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի

Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Իշխանափոխություն՝

իշխանություններին նոր որակ ձեւաւորելու նպատակով 2

ՀՅԴ 120

Հայ Յեղափոխական Դաշնակցության վճռորոշ դերը Հայ

ազատամարտի կազմակերպման և ղեկավարման ու հայոց

անկախ պետականության ստեղծման գործում 4

ԼՂՀ հիմնախնդիր

Այն փոթորկալից օրը 11

Հայկական հարց

Հայկական հարցը և

տարածաշրջանի նաւթի պաշարները 17

Տեսակետ

Համարկում՝ տարանջատումով 21

ՀՀ բանակ

Զինվորականության բարոյա-հոգեւոր որոշ հիմնախնդիրների

շուրջ. դիտարկում հայ իրականությունից 29

Մշակույթ

Պարապ զրույց 35

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Ցինիզմի ծայրակէտը 44

Նոր գրքեր

Մուշեղ Միքայելյան, «Ազատամարտ» 45

Պատկերասրահ

Սարո Կալենց 48

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

Digitized by ARF PR Office

Իշխանափոխություն՝ իշխանություններին նոր որակ ձեւաւորելու նպատակով

ՀՅ Դաշնակցութիւնը միշտ ձգտել եւ այժմ էլ ձգտում է նոր որակի իշխանութիւններ ձեւաւորել Հայաստանում: Հայաստանի երեք նախագահների օրոք ձեւաւորուած քաղաքական, տնտեսական եւ սոցիալական համակարգերից եւ ոչ մէկը լիարժէք զարգացումներ չապահովեց Հայաստանի եւ հայութեան համար:

Առաջին նախագահի ստեղծած համակարգը յատկանշւում է տնտեսութեան համատարած քայքայմամբ ու թալանով, մէնիշխանական (ավտորիտար) բռնատիրութեամբ, հասարակութեան ճընշիչ մեծամասնութեան աղքատացմամբ, Արցախեան ազատագրական պայքարի, Հայ դատի եւ առհասարակ հայոց պահանջատիրութեան նկատմամբ բացասական դրսեւորումներով, զիջողականութեամբ եւ այլն: Դաշնակցութիւնը այս շրջանում ամբողջական ընդդիմութիւն էր ե՛ւ քաղաքական, ե՛ւ յատկապէս գաղափարախօսական իմաստով:

Երկրորդ նախագահի օրոք, թէեւ անկիւնադարձային փոփոխութիւն տեղի ունեցաւ արտաքին քաղաքականութեան մէջ, թէեւ սոցիալական բարեփոխումներ եղան, առաջացան փոքր ու միջին գործարարական ոլորտներ, մութն ու ցուրտը յաղթահարուեցին, այնուամենայնիւ «ազատ շուկա»-ի մոդելի կանոնակարգմանը զուգընթաց, աստիճանաբար ձեւաւորուեց օլիգարխիկ համակարգը՝ կլանային, արտատնտեսական յարաբերութիւնների նախնական տիպը փոխարինուեց կապիտալիստական ուժերի սանձարձակ տիրապետութեամբ եւ քաղաքական անմիջական դերակատարութեամբ:

Դաշնակցութիւնը ներքին քաղաքական դաշտը կայունացնելու եւ արտաքին քաղաքականութեան դիրքերը ամրացնելու նպատակով, նախաձեռնեց կոալիցիոն համագործակցութեան տարբերակը, ընդ որում, դրա դասական ընկալմամբ. պատասխանատուութեան չափերը յարաբերակցաբար ճշտւում էին ըստ իրաւասութիւնների եւ ներկայացուածութեան բաժինների: Ինչո՞ւ էինք պնդում նման ձեւաչափով համագործակցելու սկզբունքի վրայ: Ինչո՞ւ էինք, սատարելով երկրորդ նախագահին եւ անդամակցելով կոալիցիային, մեր քաղաքական օրակարգում մշտապէս արծարծում սոցիալ-տընտեսական վիճակը եւ մինչեւ իսկ այլընտրանքային դիրքերից քննադատում օր-

ուայ գործադիր իշխանութեան առկայ սխալները: Որովհետեւ այս շրջանում Դաշնակցութիւնը, մաս կազմելով քաղաքական կոալիցիային, այնուամենայնիւ իրեն վերապահեց գաղափարախօսական ընդդիմադրի իրաւունք: Այս կեցուածքը հասկանալու համար բաւական է տարբերակել քաղաքականութիւն ու գաղափարախօսութիւն հասկացութիւնները, նրանցից ածանցուող մօտեցումներն ու կեցուացքները, եւ հասկանալ, որ մարդկային մտքի այդ երկու խոշոր արգասիքները միշտ էլ լինում են միասին եւ ազդում միմեանցից, սակայն պահպանում են իրենց ուրոյն գոյութիւնը: Դասական օրինակներում, քաղաքական կոալիցիաները հիմնականում առաջանում են գաղափարապէս դրկից հոսանքների համագործակցութեան հէնքի վրայ, իսկ ընդդիմութիւնը, գաղափարախօսական առումով, լինում է առաւել այլատարր: Մեզանում դասական այս օրէնքը դեռ չի գործում իր ամբողջ հզօրութեամբ, որովհետեւ նախ դեռ երիտասարդ է մեր պետութիւնը եւ ապա՝ խիստ ապագաղափարականացուած է մեր քաղաքական դաշտը: Իսկ ամենագլխաւորն էլ այն է, որ ազգային անլոյծ գերխնդիրներ ունեցող մեր ազգի համար չափազանց թանկ հաճոյք է ներքաղաքական ապակայունութիւնը: Նշուած հանգամանքները յաճախ Դաշնակցութեանը ստիպում են լինել շրջահայեաց եւ, պահպանելով գաղափարախօսական սեփական մօտեցումները, քաղաքական դաշտում համագործակցել մրցակցի եւ մինչեւ իսկ հակառակորդի հետ:

Երրորդ նախագահի դեռ չաւարտուած ժամանակաշրջանը ցայժմ յատկանշւում է մենաշնորհների աճով, ժողովրդի կենսամակարդակի նուազեցմամբ, փոքր եւ միջին տնտեսութիւնների քայքայմամբ, տնտեսական մի քանի խոշոր ձեռնարկատիրութիւնների օտարմամբ, հայ-թուրքական յարաբերութիւնների սխալ մեկնարկով, դիւանագիտական բնագաւառում տկարութեան անհրապոյր դրսեւորումներով: Այս շրջանը յատկանշւում է նաեւ մարտիմէկեան դէպքերի արդիւնքում ստեղծուած ներքաղաքական ապակայունութիւնը յաղթահարելու դոմինանտ եւ ինքնանպատակ ձգտումով, որն, իհարկէ, զիջողականութեան մտակեցուածք պարտադրելով ՀՀ արտաքին քաղաքականութեանը, այդուհանդերձ հանգեցրեց կայունութեան վերականգնման: Այդ պայմաններում, երբ արդէն հայ-թուրքական յարաբերութիւններում սխալ մօտեցումները դրուեցին նժարի վրայ, Դաշնակցութիւնը այլեւս հիմնարար պատճառներ չունէր մնալու իշխանութեան մէջ:

Արդ գաղափարախօսական գետնի վրայ Դաշնակցութիւնը առնուազն երկու գլխաւոր առանցքներով է տարբերւում առաջին նախագահի նէոլիբերալ, երկրորդ նախագահի ազգային-ազատական, իսկ երրորդի՝ պահպանողական հոսանքներից: Առաջին՝ Դաշնակցութիւնը, ի տարբերութիւն վերը նշուածների, ազգային ու պետական շահերը չի հակադրում միմեանց, եւ համոզուած է, որ, խելամիտ քաղաքականութեամբ, հնարաւոր է առանց ազգային հիմնանպատակներից հրաժարուելու, զարգացնել պետութիւնը: Երկրորդ՝ Դաշնակցութիւնը, հակառակ վերանկախացած Հայաստանի քաղաքական էլիտայի, խորապէս հաւատում է սոցիալական արդարութեան եւ համերաշխութեան սկզբունքներին եւ այդ ուղղութեամբ ունի իր համակարգային մոդելը:

Մնում է խորհել, թէ այսուհետ քաղաքական ինչպիսի՞ նկարագրով ու բնութագրով պէտք է հանդէս գայ մեր պետութիւնը եւ ինչպիսին պէտք է լինի ՀՀ իշխանութիւնների նոր որակը:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃՌՈՐՈՇ ԴԵՐԸ

ՀԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ար. Ս. Եղիազարյան
Պատմական գիտությունների թեկնածու

Մեզանում հաճախ են անդրադառնում Հայ Յեղափոխական Դաշնակցության ստեղծման և գործունեության պատմությանը: Երբեմն այդ անդրադարձն ունենում է չեղած ու շինծու փաստեր պեղել-հանելու, երբեմն էլ՝ պատմական խեղված իրականությունը վերականգնելու նպատակ: Սույն ակնարկը նպատակ ունի պատմաբանի անաչառ հայացքով դիտարկելու ՀՅԴ առաջին 28 տարիների պատմությունը՝ սկսած հիմնադրումից (1890 թ.) մինչև Հայաստանի Հանրապետության ստեղծումը (1918 թ.):

Հայ քաղաքական կուսակցությունների ստեղծումը 19-րդ դարի վերջին Հայոց պատմության մեջ ունեցավ դարակազմիկ նշանակություն: Հայտնի է, որ Հայոց պետականությունը բուն Հայաստանում կործանվել էր դեռևս 11-րդ դարի կեսերին, իսկ Հայաստանի տարբեր մասերում գոյատևած կամ դարերի ընթացքում ծագած ինչ-ինչ պետականաստիպ կազմավորումներն ունեցել էին սոսկ տեղային բնույթ: Մինչ հայ քաղաքական կուսակցությունների ստեղծումը անցած 8,5 դարերի ընթացքում թշնամիներին հաջողվել էր վերացնել այն ուժը, որն ի վիճակի էր կազմակերպելու և առաջնորդելու հայությանը: Հայ ժողովուրդը վերածվել էր միատարր մի զանգվածի՝ անգլուխ ու անկազմակերպ:

Աբդուլ Համիդի իշխանության ժամանակաշրջանը բնորոշվեց հայ ժողովրդի նկատմամբ ժամանակ առ ժամանակ կիրառվող մասնակի կոտորածներով, որոնց նպատակը հայության մեջ անկախության և սեփական պետականություն ունենալու վերջին բեկորների վերացումն էր: Հայ ժողովրդի արևմտյան հատվածն աստիճանաբար մեռնում էր, մեռնում էր թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես: Սակայն ասել, որ Արևմտյան Հայաստանում չկային որոշ գավառներ, որտեղ դեռևս պահպանվում էին հայ հին փառքի հիշողությունները և որոնք ժամանակ առ ժամանակ ծառանում էին բռնության դեմ, սխալ կլիներ: Նման շրջաններ էին Վասպուրականը, Կարինն ու Սասունը: Այդտեղից էլ պետք էր սկսել: Պատահական չէ, որ առաջին հայ քաղաքական կուսակցությունը ստեղծվեց Վանում (Արմենական կուսակցություն, 1885 թ.): 1887 թ. ստեղծվեց երկրորդ հայ քաղաքական կուսակցությունը՝ Հնչակյան կուսակցությունը Ժնևում:

Հեղափոխական գաղափարները հայության մեջ Անդրկովկասում և հայության հիմնական կենտրոն Թիֆլիսում 1890 թ. ծնունդ տվեցին Ռուսական կայսրության պատմության մեջ առաջին քաղաքական կուսակցությանը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությանը: Մինչ ՀՅԴ ստեղծումն Արևմտյան Հայաստանում Արմենական և Հընչակյան կուսակցություններն արդեն ծավալել էին որոշ գործունեություն, առաջինը՝ Վանում, երկրորդը՝ Սասունում: Երբ Թիֆլիսի հայ հեղափոխականների երեք ակտիվ ղեկավարների՝ Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի և Ստեփան Զորյանի (Ռոստոմ) ջանքերով սկսեց կազմավորվել հայ հեղափոխականներին միավորող

կազմակերպություն, նրանք չէին կարող հաշվի չնստել արդեն գոյություն ունեցող երկու հիշյալ կուսակցությունների հետ: Դրանով էր պայմանավորված ստեղծվող կազմակերպության անվանումը՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցություն, ինչպես նաև բոլոր հայ հեղափոխական կազմակերպությունների միավորման նրա ստեղծողների փորձը: 1890 թ. տեղի ունեցած Հայ Յեղափոխականների Դաշնակցություն կազմակերպության հիմնադիր ժողովին հրավիրվել էին նաև Արմենական և Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչները: Առաջին երկու տարիներին կարծես թե միավորման փորձը տալիս էր իր դրական արդյունքները, սակայն 1892թ. համագումարին, որտեղ պետք է լուծվեր միասնական կազմակերպության վերջնական կազմավորման հարցը, արմենականների ու հնչակյանների ներկայացուցիչները չներկայացան:

Պարզ էր մի իրողություն. ծնունդ էր առել աննախադեպ հզոր մի հեղափոխական շարժում հայության մեջ, որն ուներ իր անզուգական առաջնորդները, որն իր դրոշի տակ միավորում էր արևելահայ գրեթե բոլոր հեղափոխականներին և, անտարակույս, «կլանելու» էր թե՛ արմենականներին և թե՛ հնչակյաններին: Թերևս հենց այս մտավախությամբ էլ պայմանավորված էր հիշյալ երկու կուսակցությունների փասացի հրաժարումը մասնակցելու Հայ Յեղափոխականների Դաշնակցությանը:

Ինչևէ. Հայ Յեղափոխականների Դաշնակցությունն իր 1892 թ. համագումարում վերանվանվեց Հայ Յեղափոխական Դաշնակցություն: ՀՅԴ-ն իր առաջ խնդիր էր դրել ազատագրել Արևմտյան Հայաստանը և վերականգնել Հայոց պետականությունը: Արևմտյան Հայաստանից ստացվող տեղեկությունները մտահոգիչ էին: Արևմտահայությունը բռնել էր մեռնելու ճանապարհը: Այստեղից էլ ՀՅԴ կարգախոսը՝ «Մահ կամ ազատություն»: Այո՛, մեռնող ժողովրդի վերջնական հարության միակ հնարավորությունը ազատությունն էր: ՀՅԴ ծրագրում նշվում էր, որ յուրաքանչյուր ժողովուրդ կարող է լիովին ինքնադրսևորվել միայն ազատության պայմաններում: Մինչ այդ հարկավոր էր որոշակի գործունեություն ծավալել Արևմտյան Հայաստանում:

ՀՅԴ-ն մշտապես իր առաջ դրել է իրականանալի նպատակներ, որով էլ պայմանավորված էր Արևմտյան Հայաստանի ազատագրության հանգրվանային ռազմավարության որդեգրումը: Առաջին հանգրվաններում հարկավոր էր գործիչների միջոցով Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում տարածել քարոզչություն, կազմակերպել ու առաջնորդել տարեայնորեն սկսված ֆիդայական կամ հայդուկային շարժումը, որին օգնության էին նետվելու Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում ստեղծվող զինված խմբերը: Պատահական չէ, որ որպես նպատակակետ ընտրվեց Սասունը, որը պատմականորեն աղացուցել էր հայ ոգու պահապանի իր դերը: Այնտեղ արդեն գործունեություն էր իրականացրել Հնչակյան կուսակցությունը: ՀՅԴ առաջին գործիչները Սասունում ծավալեցին արդյունավետ աշխատանք: Կուսակցության շարքերն ընդունվեցին Սասունի առաջին հայդուկ-ֆիդայիները՝ Արաբոն և Աղբյուր Սերոբը, այնուհետև՝ Գևորգ Չաուշն ու Անդրանիկը: Թիֆլիս մեկնելով և ՀՅԴ-ին ծանոթանալով՝ շուտով ՀՅԴ-ին անդամագրվեց նաև հնչակյան Հրայր Դժոխքը: Սասունի հայդուկների շարքերը սկսեցին բազմանալ:

Հենց սկզբից ՀՅԴ-ին հարկ եղավ անցնել ծանր փորձությունների միջով: Արևելյան Հայաստանից Արևմտյան Հայաստան խմբերի անցումը խոչըն-



դոտվում էր ցարական սահմանապահների կողմից, իսկ Ս. Կուկունյանի խումբը նույնիսկ սահմանն անցնելիս գնդակահարվեց ռուս զինվորների կողմից: Ս. Կուկունյանն ախորվեց: Սակայն նման միջադեպերը չկասեցրին ՀՅԴ գործունեության այդ ուղղվածությունը, դեռ ավելին, շուտով այդ շարժումն ավելի ակտիվացավ:

1894-96 թթ. Աբդուլ Համիդ սուլթանի հրամանով Արևմտյան Հայաստանում տեղի ունեցան հայ ժողովրդի մասսայական կոտորածներ: Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում արդեն կուսակցական գործիչներ և մարտական խմբեր ունեցող ՀՅԴ-ն մասնակցեց ինքնապաշտպանությանը: Պարզ դարձավ, որ հայության մեջ այլևս գոյություն ունի կազմակերպիչ մի հզոր ուժ: Հենց այդ ուժին էր այդուհետև վիճակված գրեթե միայնակ ղեկավարելու հայ ժողովրդի սկիզբ առած ազատագրական շարժումը: Իսկ որ այդ շարժումը սկսվել էր, փաստ է: Սասունում երկար ժամանակ տեր ու տնօրինություն էր անում և թուրք ու քուրդ պաշտոնյաներին սարսափի մեջ պահում Աղբյուր Սերոբը, որին Սասունի իշխան էին կոչում, իսկ նրա մահից հետո՝ Հրայր Դժոխքը, Գևորգ Չաուշն ու Անդրանիկը: ՀՅԴ-ն Արևմտյան Հայաստանում ամենուրեք զինված խմբեր էր ստեղծում, որոնց գենքով ապահովում էին Անդրկովկասից եկող ՀՅԴ զինատար խմբերը: ՀՅԴ գործիչները պատվով և նվիրումով էին կատարում իրենց պատասխանատու աշխատանքը: Արևմտյան Հայաստանը եռում էր:

Այդ իրավիճակում ՀՅԴ-ն որոշեց արևմտյան տերությունների ուշադրությունը վերստին Հայկական հարցի վրա բևեռելու, և Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու Օսմանյան կառավարության ստանձնած պարտավորության մասին հիշեցնելու նպատակով իրականացնել մի գործողություն՝ Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում:

Որոշվեց գրավել կայսրության գլխավոր բանկը՝ Բանկ Օսմանը: Այդ բանկի պայթեցումը կարող էր կաթվածահար անել Օսմանյան կայսրությունը: Բանկը գրավվեց 1896 թ., սակայն ռուսական դիվանագիտության սպառնալիքների ներքո, թե բանկը պայթեցնելու դեպքում իրենք չեն արգելի սուլթանին հայերի կոտորածներ կազմակերպել, ինչպես նաև զինամթերքի ֆիշ լինելու պատճառով, ՀՅԴ մարտիկները հեռացան բանկից և նավերով տեղափոխվեցին Եվրոպա: Միևնույն ժամանակ ՀՅԴ մարտիկները ռմբահարումներ իրականացրեցին Կոստանդնուպոլսի Սամաթիա թաղամասում՝ թույլ չտալու համար քաղաքի հայության կոտորածը գործողությունից հետո: Ինչը հաջողությամբ պսակվեց:

Շուտով ՀՅԴ-ն իրականացրեց ևս երկու գործողություն Արևմտյան Հայաստանում և Կոստանդնուպոլսում:

Առաջինը 1896 թ. Վանի ինքնապաշտպանության մարտիկներին կոտորած քրդական Մազրիկ ցեղին պատժելու գործողությունն էր, որը կոչվեց Խանասորի արշավանք: Գործողությունը, որին մասնակցում էին ավելի քան 250 հայդուկներ, հաջողությամբ իրականացվեց 1897թ.: Գործողությունը սարսափ տարածեց թուրքերի և քրդերի վրա,



Բանկ Օսմանի շենքը

Գրողությունը, հասկանալի է, երկնային շնորհ է, բայց հո Գրողների միությունը եղեմ չէ, որ այդ դրախտային պարտեզը կողպելու կամ այդ բուրաստանից քշվելու վախը Ադամից ու Եվայից հետո կաթվածահար անի գրողին: Ստեղծագործական միություններ հղացողների ու իրագործողների գլխավերևում երկինքը դատարկ էր, արվեստագետն իր երկնային ճամփի ճամփորդը չէր, խորհրդային գաղափարական ճակատում պարտադիր ծառայության զորակոչիկ էր: Ինչքան էլ չտեսնելու տաս՝ այն երևույթների մեջ, որոնց դեմ պայքարում էր ԳՄ-ն, նաև «ցեղով ազգային» գրականություն էր: (Պատահական չէ, որ այսօր ուզվում է, անգուսպ ուզվում է, որ Չարենցը ազգայնական եղած լինի և ոչ թե հեղափոխական): Խորհրդային Միությունը սպառվեց, հանունն էլ, ընդդեմն էլ հետը անէացան, իսկ ԳՄ-ն իր փուքաջան ու անչանչիր գործունեությամբ, թող որ ակամա, շարունակում է պայքարել գրականության դեմ, որն այսօր ոչ ցեղով է ազգային, ոչ էլ բովանդակությամբ սոցիալիստական: Ի՞նչ անհրաժեշտությամբ է գոյատևում, պատմական գործող հուշարձա՞ն է, մնացել է, որ վկայի հետևորդներիս սրբազան երկյուղածությո՞ւնը անցավորաց հիշատակին, թեթևացնում է գրողի տառապա՞նքը. ահա ԳՄ-ի ցավազերծող հաբերը հակացուցված են գրողի երկունքի ցավերին, վնասում են պտղին:

Գրական ընթացքը հարկավորություն չունի ուղղորդվելու, և ոչ էլ դրա հնարը կա: Մի քիչ հուսահատ, մի քիչ ցինիկ մեր կենսափիլիսոփայությունը գրական չափանիշ է ցևավորում, և այդ չափանիշով տաղանդներ ենք «հայտնաբերում»՝ ըստ Միության կոլեկտիվի անդամների թվաքանակի հետ կապված պահանջարկի: Նշանակված օրը և նշանակված ժամին: Մինչդեռ տաղանդը ունակ է ինքն իրեն տարաժամ հայտնաբերելու և ճանաչվելու առանց ՀԳՄ անդամատոմսի: Իսկ գրական մամուլը... Մալիցի խափշիկներն Աֆրիկայում ինչպե՞ս են գոյատևում՝ այդպես:

Ասածո պատի՞ժ է, պրծում չկա՞...

Ժամանակը մարդու ներսում է, դրսում չէ: Թող որ գրողը վարժվել է Գրողների տանը, սիրտ է՝ չի դիմանա, եթե դրա դռանը կողպեք տեսնի: Բարի՝ կողպեք, ուրեմն, պետք չէ, դուռը թող բաց մնա: Միայն թե ներսում Միություն չլինի, թե չէ հոտի գլուխը ոնց էլ շրջես՝ կաղ ոչխարներն առաջ են ընկնելու: Ներսում ՀԳՄ հիմնադրամը կնստի, կգործի շուրջօրյա ակումբը՝ նարդի, շախմատ, սուրճ, սրահի պատին էլ, աչքի ընկնող տեղում, համակարգչի մեծ-մեծ տառերով գրված-խփված կլինի՝ «Դրսից օդի բերելը արգելվում է»: Չի խանգարի՝ արգելեն-չարգելեն բերվելու է. կիմեն, գոհություն կիջնի վրաները, կսկսեն իրար գովել... Երևի թե ՀԳՄ նախագահի աթոռն էլ հարկավոր բան է, բայց Գրողների տանը չէ՝ հեռու մի տեղ կդրվի, նախագահն էլ օժտված կլինի աստվածային զորությամբ՝ ինքը գրողին երկինքներից կտեսնի, իսկ գրողը նրան՝ ոչ...

Սրա վերջն ի՞նչ է լինելու:

Խորհրդային տարիներին սրամտում էին՝ «Վերջից եկողներ կան, այնտեղ էլ մի բան չի...»: Այսօրվա մասի՞ն են ասել, ճիշտ են ասել՝ ոչ մի բան էլ չի փոխվելու: Այնպես որ՝ կուչուչիգ մի ընկնավորիր ու հարայ մի տուր, Միությունը չքանդեցին...

Ասացի՝ պարապ զրույց է:

նում հայությունը և ՀՅԴ-ն 1906 թ.: Այդ ժամանակ ՀՅԴ-ն արդեն 160 հզ. անդամ ուներ: Այդ-ոիսի մասսայական և, միևնույն ժամանակ, կազմակերոված ուժ տարածաշրջանում գոյություն չուներ:

Իրադրությունը դժվարին էր Արևմտյան Հայաստանում: 1904 թ. թուրքական հարձակման դեմ ծառացավ Սասունը: Ծանր մարտեր տեղի ունեցան, սակայն Սասունի ինքնապաշտպանությունը պարտություն կրեց, քանի որ նախապատրաստվել ինքնապաշտպանությանը սասունցիները և ՀՅԴ-ն մինչև վերջ չէին հասցրել:

Դրան գումարվեց նաև այն, որ 1905 թ. հայությունն աննկարագրելի մեծ կորուստ ունեցավ: Ռումբի պայթյունից զոհվեց 1890 թ.-ից ի վեր ծավալված հայ ժողովրդի ազատագրական շարժման մեծ առաջնորդը՝ Քրիստափոր Միքայելյանը, որն իր կամքով ու նվիրումով, հերոսականությամբ ու բոցաշունչ խոսքով միավորում էր հայության բոլոր հատվածներին:

Թերևս հենց այդ էր պատճառը, որ բոլորը շունչները պահած

Քրիստափոր Միքայելյան

հետևում էին 1907 թ. տեղի ունեցած ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովին: Կուսակցության ներսում կարծես թե առաջ էին եկել երկու հակադիր թևեր, և ժամանակակիցները կանխագուշակում էին ՀՅԴ-ի պառակտումը: Չնայած չկար մեծ առաջնորդը, ՀՅԴ պառակտումը տեղի չունեցավ: Ավելին՝ Սիմոն Զավարյանի և Ռոստոմի ջանքերով կուսակցությունն ընդհանուր ժողովից հետո հայ ժողովրդին ներկայացավ էլ ավելի կուռ ու կազմակերոված, էլ ավելի հզոր ու նոպատակաուղղված:

Եվրոպայում սկսվում էր երիտթուրքերի շարժումը, որ օգնության համար դիմում էր ՀՅԴ-ին: Օրակարգի էր դրվել երիտթուրքերի և ՀՅԴ համագործակցության հարցը: Փորձենք այդ իրողությունը քննարկել ժամանակաշրջանի իրադրության լույսի ներքո: Աբդուլ Համիդի կամ այսպես կոչված Կարմիր սուլթանի իշխանության ժամանակաշրջանը նշանավորվել էր հայության նկատմամբ Օսմանյան կայսրության հալածանքների սաստկացմամբ և հարյուր հազարավոր հայերի կոտորածով: ՀՅԴ-ն, որ մեծ ջանքեր էր ներդրել Աբդուլ Համիդի տապալման գործում, կազմակերոել նրա մահափորձը 1905 թ., որից Կարմիր սուլթանը հրաշքով էր փրկվել, չէր կարող անուշադրության մատնել հակահամիդյան որևէ շարժում, նամանավանդ, եթե այդ շարժումը սկիզբ էր առնում Եվրոպայում: Հայության մեջ դեռևս թարմ էին 1904 թ. Սասունի արյունալի դեպքերն ու կոտորածները: Երիտթուրքերի շարժումը իրական էր դարձել Աբդուլ Համիդի տապալումը, և հայ ազատագրական շարժումը աջակցեց նրան, ըստ որում ոչ միայն ՀՅԴ-ն, այլև շատ այլ հայ ու օսար քաղաքական ուժեր:

1908 թ. Աբդուլ Համիդը տապալվեց, և իշխանության եկան երիտթուրքերը՝ «ազատություն», «հավասարություն» և «եղբայրություն» կարգախոսներով: ՀՅԴ-ն նույնիսկ իր պատգամավորներն ունեցավ Օսմանյան խորհրդարանում: 1909 թ. երիտթուրքերն Ադանայում կոտորեցին 30 հզ. հայ: Պարզվեց օսմանյան նոր վարչակազմի իրական դիմագիծը, և ՀՅԴ-ն շուտով դադարեցրեց համագործակցությունը նրա հետ: Այդ փաստը՝ իրադարձությունները չշտապեցնելու նպատակով, տեղի ունեցավ անաղմուկ և ասիճանաբար: Ինչ տվեց հայությանը և ՀՅԴ-ին «համագործակցություն»-ը երիտթուրքերի հետ. հայ ազատագրական շարժմանը և նրան առաջնորդող կուսակցությանը թեկուզ կարճ, բայց ժամանակ տվեց հավաքելու ուժերը և կազմակերովելու՝ դիմակայելու համար մոտեցող փոթորիկներին:

1908 թ.-ից սկսած ՀՅԴ-ն ակտիվ ու վճռորոշ մասնակցություն ունեցավ Իրանի հեղափոխությանը, դաշնակցական Եփրեմը դարձավ իրանական հեղափոխական բանակի հրամանատարը, իսկ հեղափոխությունն ի վերջո հաղթանակ տարավ:

Ամփոփելով ՀՅԴ գործունեության երկրորդ տասնամյակը՝ նշենք, որ կուսակցությունն արդեն հանդիսանում էր համատարածաշրջանային, որ իր մասնակցությունն էր բերում տարածաշրջանի բոլոր կարևոր իրադարձություններին: Իր գլխավոր նպատակի՝ Հայաստանի ազատության համար մարտնչելով՝ ՀՅԴ-ն նաև իր լուրջ մասնակցությունն էր բերում օսմանյան լծի դեմ ծառացող ժողովուրդնե-

Դաշնակցական պահակախումբը Նախիջևանի Մազրա գյուղում, 1905 թ.
Լուսանկարը՝ Ջ. Գորդոն Բրաունի

ri ազատագրական պայքարին: ՀՅԴ կազմակերպած հայ կամավորական գումարտակը 1912 թ.-ից մասնակցեց նաև Բալկանյան պատերազմին՝ անուրանալի իր դերակատարությամբ փայլելով թուրքերի դեմ բալկանյան ժողովուրդների մղած հաղթական կռիվներում:

ՀՅԴ 20-ամյակին հայ ժողովուրդը ձոնեց իր փառերգը, որ երգում են մինչև այսօր.

Դաշնակցության քաջ զինվորներ
Բերդան, մոսին են գրկել,
Ազատության սիրույն համար
Արյուն թափել են ուխտել:

Դաշնակցությունը անսասան
Հնչեց փող ազատության,
Ազատություն, արդարություն
Առանց ցեղի խտրության:

1913 թ. հերթական մեծ կորուստն ունեցավ հայ ազատագրական շարժումը: Կյանքից հեռացավ այդ շարժման հենասյուներից երկրորդը՝ Սիմոն Զավարյանը:

Մոտենում էր մի իրադարձություն, որն իր կնիքն էր դնելու հայոց ողջ հետագա պատմության վրա: Հայոց մեծ եղեռնը: Մեզանում հաճախ սխալ մեկնաբանության է արժանանում այնպիսի մի խնդիր, ինչպիսին 1915 թ. իրադարձություններն էին: Հարցը դիտարկվում է հետևյալ տեսանկյունից: Հայերը կազմակերպված չէին, պատրաստ չէին ինքնապաշտպանության և դրա պատճառով էլ կոտորվեցին, ըստ որում՝ ՀՅԴ-ն լինելով համահայկական ու հզոր կազմակերպություն, չկարողացավ իր պատմական դերը ճիշտ ձևով իրականացնել: Սակայն, դատելով այն իրողությունից, որ Օսմանյան կայսրությունը դարերով իրականացրել էր հայության թեև մասշտաբով ավելի փոքր, բայց անընդհատ կոտորածներ, իսկ ՀՅԴ-ի հանդես գալու շրջանում էլ Աբդուլ Համիդն ավելի էր սաստկացրել այդ քաղաքականությունը, ըստ որում՝ նախքան ՀՅԴ-ն հայությունը կոտորվում էր առանց ինքնապաշտպանության չնչին փորձի, վերոհիշյալ պնդումը կարելի է ձևակերպել հակառակ տեսանկյունից: Այսինքն՝ հայերը 1915 թ. արդեն բավական կազմակերպված էին, որոշ չափով պատրաստ էին ինքնապաշտպանության, դրա պատճառով էլ երիտթուրքերին չհաջողվեց մինչև վերջ իրականացնել իրենց դժոխային մտադրությունը, և հայ ժողովրդի մի զգալի հատվածը հենց այդ կազմակերպվածության և ինքնապաշտպանության շնորհիվ փրկվեց և շուտով իր արևելահայ հատվածի հետ միասին կերտեց սեփական անկախ պետականությունը: Ըստ որում՝ ՀՅԴ-ն իրոք լինելով համահայկական և հզոր կազմակերպություն, փառքով իրականացրեց իր պատմական առաքելության ամենակարևոր դրույթներից մեկը՝ փրկելու հայությանը բնաջնջումից և առաջնորդելու նրան դեպի հաղթանակներ ու անկախ պետականություն: Այլապես ինչպես բացատրել այն փաստը, որ կարճ ժամանակ անց ցարի հրամանով կազմավորվեցին հայկական յոթ կամավորական գումարտակներ՝ բազմահազար հայ զինվորներով: Ինչպե՞ս կարող էր անկազմակերպ ու թույլ հայությունը ցեղասպանության նման արհավիրքից հետո իսկական բանակ ստեղծել, և ինչպե՞ս կարող էր ՀՅԴ-ն ղեկավարել ու կազմակերպել այդ գումարտակների ստեղծումը՝ առանց իր պատմական առաքելության իրականացման:

ՀՅԴ-ի կազմակերպմամբ ու ղեկավարությամբ ստեղծված կամավորական գումարտակներն աննախադեպ երևույթ էին վերջին վեց դարերի Հայոց պատմության մեջ: Ստեղծվել էր իսկական բանակ՝ փորձված, արհավիրքներով անցած, թրծված

ու երկաթյա մարտիկներից կազմված, որոնց առաջնորդում էին փառքով պսակված և տաղանդավոր զորավարները՝ Անդրանիկն ու Դրոն, Համազասպն ու Քեռին, Արղությանն ու Դաշնակցական Խեչոն: 1915-16 թթ. ռուսական զորքի հետ միասին նրանք ազատագրեցին Արևմտյան Հայաստանը:

Եվ հենց նրանք էին՝ համալրված շարքերով և առավել կազմակերպված, որ 1918 թ.՝ ռուսական զորքերի կողմից թուրքական ճակատը լքելուց հետո, դիմակայեցին թուրքական բանակին ու մայիսյան կռիվներում ջախջախեցին նրան: 1918 թ. մայիսին ՀՅԴ-ին՝ որպես համահայկական կազմակերպության, հաջողվեց թուրքերի դեմ հանել սասունցուն ու վանեցուն, կարնեցուն ու մշեցուն, ալաշկերտցուն ու մոկացուն, երևանցուն ու վանաձորցուն, գյումրեցուն ու գառնեցուն, ողջ հայությանը: Թուրքական իշխանությունը ստիպված էր ընդունելու մի բան՝ Հայոց անկախ պետականությունը, որ 28 տարի առաջ նույնիսկ պատկերացնել անկարելի էր: Այն ժամանակ՝ 19-րդ դարի վերջին, նա տեսնում էր անդեմ ու անկամ հայություն, այժմ նրա դիմաց կանգնած էր զինված ու ոգեշնչված հայը, կազմակերպված ու հզոր հայը:

Այո՛, անցել էր 28 տարի: Ինչե՞ր չէր տեսել հայ ժողովուրդը, ինչի՞ միջով չէր անցել, բայց այդ ամենից դուրս էր եկել կոփված ու հզոր, մարտական ու կազմակերպված: 28 տարի էր, ինչ հայ ազատագրական շարժման գլուխ էր կանգնել ՀՅԴ-ն, կանգնել էր ու առաջնորդել այն՝ սեփական նվիրումով օրինակ ծառայելով ողջ ազգին: Այդպիսի 28 տարի չէր եղել Հայոց պատմության մեջ: Դեռ չէր բոլորել ՀՅԴ-ի ու նաև հայ ազատագրական շարժման երրորդ տասնամյակը:

Ազատության ջահը վառեց
Մեր հայրենիքի գլխին...

1918թ. մայիսի 28-ն էր: Հայությունը նվաճել էր անկախ ապրելու իրավունքը, անկախ պետականություն ունենալու իրավունքը: Թուրքը ճանաչել էր այդ պետականությունը, որովհետև հայը նրան ստիպել էր ճանաչել այն: Ուստի ճիշտ չեն նրանք, որ ասում են, թե իբր այդ անկախությունը թուրքի նվերն էր: Թուրքերը մեծ հաճույքով կհրաժարվեին այդ «նվեր»-ից, սակայն հայության կազմակերպված դիմադրությունն ու հաղթանակը նրանց այլ ելք չէին թողնում: Դեռ ավելին, Թիֆլիս-Գանձակ գծով դեպի Բաքու, դեպի բաղձալի նավթը շարժվող թուրքական բանակը ամբողջ ճանապարհին հանդիպում էր հայության կատաղի դիմադրությանը, որ կրկին ու կրկին կազմակերպում էր ՀՅԴ-ն: 1918 թ. Բաքվի ինքնապաշտպանությունը, որ ղեկավարում էր ՀՅԴ-ն, երկար ժամանակով կասեցրեց թուրքական բանակի առաջխաղացումը և երբ վերջապես նրան հաջողվեց գրավել քաղաքն ու հասնել նավթին, Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց: Քառյակ դաշինքի պետություններն այլ ճակատներում պարտություն կրեցին ու զենքը վայր դրեցին: Հետագայում գերմանացի գեներալներից մեկը նշում էր, որ իրենց պարտության պատճառը հայերն էին, որ փակեցին թուրքական բանակի ճանապարհը, որի պատճառով նրանք Բաքվի նավթին չկարողացան տիրել, ու իրենց ամբողջ ռազմական տեխնիկան մնաց առանց վառելիքի: Այո՛, մե՛ծ էր Բաքվի պաշտպանության դերն ու նշանակությունը նաև ու գլխավորապե՛ս արևելահայությանը կոտորածից փրկելու նպատակով: Իզուր չէ, որ այնտեղ էր գտնվում Ռոստոմը՝ Քրիստափոր Միքայելյանի և Սիմոն Զավարյանի մահից հետո հայ ազատագրական շարժման հիմնական կազմակերպիչն ու ոգեշնչողը, տաղանդավոր ղեկավարն ու մշտապես ստվերում գտնվող համեստ դաշնակցականը: Նա ապրելու է մինչև 1919 թ. հունվար, երբ հայ ազատագրական շարժումն արդեն հասել էր իր գերնպատակին՝ Հայոց անկախ պետականության վերականգնմանը:

Այսպիսին է հայ ազատամարտի և ՀՅԴ առաջին 28 տարիների իրական պատմությունը, այսպիսին է եղելությունը: 1890 թ. կանգնելով ՀՅԴ դրոշի ներքո, հայ ժողովրդի լավագույն զավակները իրականություն դարձրեցին ՀՅԴ «Մահ կամ ազատություն» կարգախոսի պահանջը: Հայ ժողովուրդն էլ՝ տեսնելով իր զավակների նվիրումը, անվարան ընտրեց ազատությունը: Հայ ժողովրդի ազատամարտը կազմակերպեց ու ղեկավարեց ՀՅԴ-ն: Իր աշխարհայացքով առաջնորդելով այդ ազատամարտը և ժողովրդին՝ ՀՅԴ-ն 28-ամյա պայքարից հետո նվաճեց գերագույն նպատակակետը՝ Հայոց անկախ պետականությունը:

ԱՅՆ ՓՈԹՈՐԿԱԼԻՑ ՕՐԸ

(Արցախ. 1988. փետրվարի 20)

Աբրահամյան Հ. Բ.



Պաղիկ-Տաղիկ, 1967 թ.

Հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ 1988 թ. փետրվարի 20-ը պետք է հատուկ ընդգծվի, որովհետև այդ նույն օրը Արցախում տեղի ունեցած իրադարձությունները ասես շրջել են երկրամասի պատմության ընթացքը և այն տարել ազգային-ազատագրական պայքարի ուղիով: Մինչ այդ տեղի ունեցած գործողությունների արդյունքում փետրվարի 13-ից Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում տեղի էին ունենում հանրահավաքներ, որին մասնակցում էին մինչև վաթսուն հազար մարդ: Ցուցարարները պահանջում էին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը դուրս բերել Խորհրդային Ադրբեջանի կազմից ու վերամիավորել Խորհրդային Հայաստանի հետ: Այդ օրերին տեղի էին ունեցել գյուղական, ավանային, քաղաքային և շրջանային խորհուրդների նստաշրջաններ, ինչպես և կուսակցական կոնֆերանսներ, որտեղ պաշտպանվել էր մարզի բնակչության օրինական պահանջը: Մարզի բնակչությունը պահանջում էր հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և ընդունել համապատասխան որոշում: Փետրվարի 19-ին մարզխորհրդի պատգամավորներ Վարդան (Սլավիկ) Հակոբյանը, Արմեն Ծատուրյանը և բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը մարզային խորհրդի գործկոմ են ներկայացրել մարզխորհրդի 67 պատգամավորների ստորագրությամբ (20 հոգի էլ ստորագրել են հաջորդ օրը) պահանջագիր՝ արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին: Մարզխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Շմավոն Պետրոսյանը այդ մասին տեղյակ է պահում մարզխորհրդի գործկոմի նախագահ Վլադիմիր Օսիպովին, որն այդ օրերին մարզգործկոմի շենք չէր գալիս և գտնվում էր կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովի

մոտ: Վ. Օսիպովը լսելով Շմավոն Պետրոսյանի բացատրությունը՝ ընդառաջել արտահերթ նստաշրջան պահանջող պատգամավորների պահանջին, մանավանդ, որ այն բխում էր «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կանոնադրության» 39-րդ հոդվածից, մերժում է: Սակայն, հաջորդ օրը, փետրվարի 20-ին, ստիպված էր համաձայնվել: Ըստ արձանագրության, գործկոմի նիստին ներկա էին մարզգործկոմի նախագահ Վլադիմիր Օսիպովը, տեղակալներ Հենրիխ Պողոսյանը, Շմավոն Պետրոսյանը, Արաքսյա Տոնոյանը, Փառուխ Հուսեյնովը, քարտուղար Ռիմա Խաչիյանը, գործկոմի անդամներ Վիգեն Հայրապետյանը (ժողկրթության մարզային բաժնի վարիչ), Սեմյոն Բաբայանը («Գյուղմեքենա» գործարանի տնօրեն), Արմիդա Գաբրիելյանը (կոնդենսատորների գործարանի բանվորուհի), Լենարդ Ղազիյանը (մշակույթի վարչության պետ), Վաչագան Գրիգորյանը (Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղար), Արմեն Իսագուլովը (ԼՂԻՄ ներքին գործերի վարչության պետ) և Բորիս Կևորկովը (կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար): Նիստին ներկա էին նաև հրավիրվածներ՝ Կարեն Բաբուրյան (մարզգործկոմի կազմբաժնի վարիչ), Իգոշկինա Ռ. (մարզգործկոմի իրավաբանական բաժնի պետ), Մինասյան Բ. (ֆինբաժնի պետ) և ուրիշներ: Քննարկվեցին հետևյալ հարցերը. 1. ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին, 2. Մարզի փողոցներում, հրապարակներում, պողոտաներում, այգիներում և զբոսապարտեզներում ժողովներ, հանրահավաքներ, փողոցային երթեր, ցույցեր և այլ միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ ժամանակավոր կանոնների հաստատում:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես է գալիս Կարեն Բաբուրյանը: Ելույթ են ունենում՝ Վ. Գրիգորյան, Լ. Ղազիյան, Ս. Բաբայան, Ա. Տոնոյան, Բ. Կևորկով, Հ. Պողոսյան, Վ. Հայրապետյան, Մ. Դանիելյան և Վ. Օսիպով[1]: Նիստի մասնակիցների վկայությամբ այն անցել է բուռն վիճաբանություններով: Ելույթ ունեցողների մեծամասնությունը առաջարկել են ընդառաջել արտահերթ նստաշրջան պահանջող պատգամավորների խնդրանքին և այդ նույն օրը հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Սակայն մարզխորհրդի գործկոմի նախագահ Վ. Օսիպովի պահանջով ձևակերպվել է հետևյալ արձանագրությունը, որը մեջ ենք բերում բնագրով. «В связи с тем, что в так называемом списке депутатов, обратившихся в исполком с требованием созвать внеочередную сессию областного Совета народных депутатов для рассмотрения вопроса о сложившейся ситуации в связи с требованием о передаче НКАО из состава Азербайджанской ССР в Армянскую ССР, отсутствуют данные об избирательных округах, подтверждающих полномочия их избирателей, исполком Нагорно-Карабахского областного Соета народных депутатов РЕШИЛ:

1. Отложить рассмотрение вопросов о созыве чрезвычайной сессии.
2. Поручить председателю совместно с мандатной комиссией проверить достоверность полномочий и данных о депутатах потребовавших проведения сессии.

Председатель облисполкома Осипов В.В.
Секретарь облисполкома Хачиян Р.В. »[2]

Ինչպես երևում է, ձևակերպված որոշման առաջին կետով հետաձգվում է արտահերթ նստաշրջան հրավիրելու վերաբերյալ պահանջը, իսկ երկրորդ կետով մարզգործկոմը թերահավատ էր մարզային խորհրդի 20-րդ գումարման պատգամավորների իսկության նկատմամբ և նախագահին հանձնարարվում է մանդատային հանձնաժողովի հետ ստուգել արտահերթ նստաշրջան պահանջող պատգամավորների «լիազորություններն ու տրվյալները»: Մինչդեռ հայտնի է, որ 1987 թ. հունիսի 21-ին տեղի ունեցած մարզխորհրդի 20-րդ գումարման ընտրությունների արդյունքները քննարկվել էին նույն թվականի հուլիսի 8-ին տեղի ունեցած առաջին նստաշրջանում ու հաստատվել ընտրը-

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) պետական արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 273, թ. 4 (արձանագրություն թիվ 5, որոշում՝ 3/56):
2. Նույնը: 2008 թ. հունվարի 23-ին ես հանդիպել եմ 1988 թ. մարզգործկոմի քարտուղար Ռիմա Վասիլևնայի հետ (մահացել է 2008թ. ապրիլին) և նրան ներկայացրել մարզգործկոմի որոշ անդամների պնդումը այն մասին, որ գործկոմը ձայների մեծամասնությամբ որոշում է ընդունել նույն օրը հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի հետ միավորելու մասին հարցը: Սակայն Ռ. Վասիլևնան պնդեց, որ ինքը ճիշտ է ձևակերպել որոշումը: Մինչդեռ դա հավաստի չէ:

ված բոլոր 150 պատգամավորների լիազորությունները[3]:

Անկախ դրանից, 1988 թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած մարզգործկոմի վերոհիշյալ նիստից հետո տեղի ունեցած ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի մանդատային հանձնաժողովի նիստը հաստատել է «...полномочия указанного количества депутатов и признала правильной»[4]:

Մարզգործկոմի վերոհիշյալ նիստում քննարկված երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես է գալիս մարզգործկոմի նախագահ Վ. Օսիպովը: Ապա ելույթ են ունենում Ի. Իսագուլովը, Հ. Պողոսյանը, Մ. Դանիելյանը, Ս. Բաբայանը, Ա. Տոնոյանը, Ռ. Խաչիյանը և Ռ. Իգոշկինան: Այդ հարցի քննարկումը մարզի ղեկավարության և Ադրբեջանի իշխանությունների համար սկզբունքային նշանակություն ուներ: Փետրվարի 13-ից Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում տեղի էին ունենում հանրահավաքներ, ցույցեր, մասսայական ելույթներ, իսկ փետրվարի 17-ից այն դարձել էր անդադար, օր ու գիշեր: Այդ ամենից խիստ անհանգստացած հանրապետության և մարզային ղեկավարները ամեն կերպ փորձում էին վերջ տալ մարզում տեղի ունեցող համաժողովրդական գործողություններին: Դրա համար խիստ կարևոր էին համարում վերոնշյալ «Ժամանակավոր կանոնների...» ընդունումը, որը ուժային մարմիններին հնարավորություն կտար ճնշելու ժողովրդական պայքարը:

Այդ հարցը նախ քննարկվել էր փետրվարի 17-ի մարզգործկոմի նիստում, հետո՝ 20-ի և 27-ի նիստերում: Թե ինչու այդ ամենը տեղավորվել է մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած վերոնշյալ մարզխորհրդի գործկոմի թիվ 5 արձանագրության մեջ, տարակուսանքի տեղիք է տալիս: ԼՂՀ պետական արխիվում կա նաև մեկ այլ արձանագրություն, որը թվագրվել է փետրվարի 18-ին: Այդ նիստում քննարկվել են վերոհիշյալ կանոնները, որոնց օգտին քվեարկել են միայն մարզգործկոմի նախագահ Վ. Օսիպովը և ներքին գործերի մարզային վարչության պետ Ա. Իսագուլովը: Գործկոմի մյուս անդամները քվեարկել են որոշումը չընդունելու օգտին: Փետրվարի 20-ին քննարկման ժամանակ պատգամավորական հանձնաժողովներին, հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարներին հանձնարարվում է մարզի բնակչության շրջանում բացատրական աշխատանք տանել ընդունված որոշման վերաբերյալ: Փետրվարի 27-ին մարզգործկոմի նախագահության նիստը անդրադառնալով այդ հարցին, որոշեց կանոնադրությունը գործողության մեջ դնել 1988 թ. մարտի 1-ից: Այդ որոշումով մարզգործկոմի իրավաբանական բաժնին հանձնարարվում է լայն աջակցություն ցույց տալ «ժամանակավոր կանոնները» գործնականում կիրառելուն[5]:

Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդում տեղի ունեցող այդ իրադարձությունների մասին տեղյակ էին հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր ցուցարարները: Նրանք պահանջում էին արտահերթ «սեսիա»: Կուսակցության մարզկոմի շենքում ծվարած Ադրբեջանի մի խումբ պարագլուխները և մարզի նրանց կամակատարները ջանքեր էին գործադրում ձախողելու մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի հրավիրումը: Այնուամենայնիվ՝ արցախցիները նախապատրաստվում էին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Մարզի շրջաններից Ստեփանակերտ էին ժամանում մարզխորհրդի պատգամավորները: Դեռևս փետրվարի 20-ի առավոտյան Ստեփանակերտ էին ժամանել Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովը և ԽՄԿԿ Կենտկոմի պրոպագանդայի բաժնի հրահանգիչ Վ. Յաշինը: Պարզվում է, որ իշխանությունների կողմից հրահանգվել էր Ստեփանակերտ բերող բոլոր ճանապարհները փակել, որպեսզի մարզխորհրդի պատգամավորները չկարողանային շրջաններից Ստեփանակերտ հասնել: Սակայն հաղթահարելով բոլոր դժվարությունները, նրանք տեղ էին հասնում լեռնային ճանապարհներով և կածաններով:

3. Նույնը, գ. 260, թ. 6:
4. Պատմական նստաշրջան, Ստեփանակերտ, 2008, էջ 105:
5. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 273, թ. 10:

Պատգամավորներին Ստեփանակերտ հասցնելու գործում կարևոր դեր են խաղացել հատկապես նախաձեռնող խմբի անդամները: Առանձնապես ակտիվ էր գործում Ռազմիկ Պետրոսյանի խումբը[6]: Ցուցարարները շրջափակել էին մարզկոմի շենքը և թույլ չէին տալիս ոչ մի ելումուտ:

1988 թ. փետրվարի 20-ին, ժամը 14:00 Երևանի օպերայի հրապարակում տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելուն նվիրված հանրահավաք, որին մասնակցում էին ավելի քան 100 հազար մարդ: Ցուցարարներին բաժանվեց «Այսօր կամ երբեք» կոչը, որը պատմում էր այդ օրերին Արցախում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Կոչում նշված է, որ «Սովետական Ղարաբաղ» թերթը հսկողությունից դուրս է, գլխավոր խմբագիր Ե. Սարգսյանը հրաժարվում է կատարել Բ. Կևորկովի ցուցումները, Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի և Մարտունու շրջկոմների ու Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղարները բնակչության հետ են: Կոչը վերջանում է հետևյալ նախադասությամբ. «Մեր խորին համոզմամբ Ադրբեջանի ղեկավարության պրովոկացիաները հնարավոր են դարձել Հայաստանի ղեկավարության և անձամբ ՀՍՍՀ Կոմկուսի ԿԿ-ի առաջին քարտուղար Դեմիրճյանի անգործունեության ու անտարբերության հետևանքով:

Ղարաբաղ. «Այսօր կամ երբեք»[7]:

Այդ նույն օրը Հայաստանի Գերագույն խորհուրդը և Հայկոմկուսի Կենտկոմը բազմաթիվ հեռագրեր ու նամակներ են ստանում Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի և ԽՍՀՄ տարբեր բնակավայրերից: Այդ օրը բազմաթիվ հեռագրեր են ուղարկում նաև Մոսկվա: Հեռագրերի հեղինակները պահանջում էին արագորեն և դրական լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի Հադրութից Հայաստան, ԳԽ նախագահ Հ. Ոսկանյանի անունով ուղարկված հեռագրում ասված է. «1988 թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի գումարման 4-րդ նստաշրջանը որոշել է խնդրել Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին միջնոր-

6. Աբրահամյան Հրանտ, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Գ. 1985-2000, Ստեփանակերտ, 2007, էջ 41, նաև՝ «Եղիցի լույս», 2000, N 5:

7. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ.1, ց.87, գ.11, թ. 95ա:

դել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արտահերթ նըստաշրջան հրավիրել՝ վերջնականապես որոշելու Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանին միավորելու և հանրաքվե անցկացնել Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի ու Շահումյանի շրջանների հայ բնակչության շրջանում՝ նրանց Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու համար:

Ժողովրդական պատգամավորների Հադրութի շրջխորհրդի նախագահի տեղակալ՝ Է. Մ. Դավթյան»[8]:

Այդ նույն օրը Հ. Ոսկանյանի հասցեով Ստեփանակերտ քաղաքի բազմաթիվ բնակիչներից ստացվել են մի շարք հեռագրեր: Ստեփանակերտի Բաքվի փողոցի 6-րդ շենքի 2-րդ բնակարանի Լեոնիդ Պետրոսյանի ընտանիքի անդամների անունից ուղարկված հեռագրում խնդրվում է Լեռնային Ղարաբաղը միավորել Հայկական ԽՍՀ-ին և այդ մասին միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջ[9]: Նույն փողոցում բնակվող Բենիկ Լալայանի, Արթուր Հայրապետյանի, Անահիտ Միքայելյանի, Տանյա Սարգսյանի, Ռոբերտ Գրիգորյանի, Ալյոշա Ալեքսանյանի, Սամվել Առուշանյանի և էլի 20 հոգու ստորագրությամբ ուղարկված հեռագրում Հ. Ոսկանյանից խնդրվում է նպաստել ԼՂ միավորմանը Հայկական ԽՍՀ-ի հետ[10]: Նույն օրը Մարտակերտից երկու էջ ծավալով հեռագիր է ուղարկվել Հայաստանի ԳԽ, որում նշված է, որ վերջին երկու ամսում ԼՂ-ից երեք պատվիրակություն է մեկնել Մոսկվա, որոնք բարձրագույն իշխանությունների առաջ հարց են բարձրացրել Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու վերաբերյալ: Նաև ասված է, որ Ադրբեջանի ռադիոն և հեռուստատեսությունը անընդհատ բարբաջում են, թե իբրև Արցախի հարցը բարձրացրել են «հայ ծայրահեղականները»: Այդ հիմքի վրա էլ Շուշիում տեղի են ունեցել ընդհարումներ: Հայաստանի իշխանություններին կոչ է արվում Լեռնային Ղարաբաղն ընդունել հանրապետության կազմում[11]:

Այնուամենայնիվ՝ Հայաստանի ղեկավարությունը այդ օրերին Արցախի հիմնախնդրի վերաբերյալ պատշաճ դիրքորոշում չուներ և չէր պաշտպանում օպերայի հրապարակում հավաքված ցուցարարների պահանջը: 1990 թ. հունվարին Հայկոմկուսի Կենտկոմում տեղի ունեցած խորհրդակցությունում հանրապետության արտաքին գործերի նախարար Ա. Ա. Մկրտչյանը պատմել է հետևյալը. 1988 թ. փետրվարի 20-ին Կենտկոմի



նախկին առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը երեկոյան ժամը 11-ին բոլորիս հավաքելով այս դահլիճում, ծանոթացրեց Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ քաղբյուրոյի որոշման հետ: Այդ որոշման մեջ գործ էր ածված «ծայրահեղականների խումբ» տերմինը, որը խիստ վիրավորական էր հայ ժողովրդի համար: Այդ ժամանակ մենք հասկանում էինք, որ հարցը ազգային-ազատագրական բովանդակություն ունի և խոսքը գնում էր ժողովրդի պատվի ու արժանապատվության շուրջ, պատիվ ու արժանապատվություն, որոնք ոտնահարվում էին: Այդ մարդիկ հնարավորություն չունեին ուսումնասիրել իրենց մայրենի լեզուն, իրենց ժողովրդի պատմությունն ու գրականությունը: Կենտկոմի այդ որոշումը դրել է այն ողբերգության հիմքը, որից չենք կարողանում ազատվել: Երկրորդ սխալը կատարվեց հուլիսի 18-ին, իսկ երրորդը 1989 թ. նոյեմբերի 28-ին[12]: Ա. Մկրտչյանն այնուհետև նշել է, որ Ղարաբաղի միակ և ճիշտ ուղին ներկայումս հանդիսանում է ինքնորոշումը: Ինչո՞ւ այլ երկրներ կարող են ինքնորոշվել, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ ոչ: Այստեղ հարցը ոչ թե Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիավորումն է, այլ Լեռնային Ղարաբաղի բնակչության իրավունքի ճանաչումը: Անցնի թեկուզ 10, 20 տարի, Լեռ-

8. Նույնը, ֆ. 207, ց. 44, գ. 3, թ. 2:
9. Նույնը, թ. 3:
10. Նույնը, թ. 4:
11. Նույնը, թ. 52-53:
12. Նույնը, ֆ. 1, ց. 84, գ. 131, թ. 28:

նային Ղարաբաղը ամուր կանգնած կմնա իր դիրքում և, որպեսզի այդ տարածքում խաղաղություն լինի, պետք է որոշվի հիմնախնդիրը[13]:

Ի՞նչ է պարզվում: 1988 թ. փետրվարի 22-ին «Պրավդայում» տպագրված ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի՝ «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշման մի օրինակը փետրվարի 20-ի երեկոյան գտնվում էր Հայկոմկուսի Կենտկոմում: Այդ ժամանակ Ստեփանակերտում շարունակվում էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի խորհուրդների արտահերթ նստաշրջանը և չէր ընդունվել պատմական որոշումը: Դեռևս չընդունված որոշումը ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն արդեն բնորոշել էր որպես մի խումբ «անջատողականների» գործողության արդյունք[14]: Ելնելով վերոհիշյալ որոշումից, Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն հաջորդ օրը, փետրվարի 21-ին, քննարկելով դեռևս չհրապարակված «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ» ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի որոշումը, նշել է, որ ԼՂ-ում տեղի ունեցող իրադարձությունները «հակասում են Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորների շահերին, վնաս են հասցնում ազգամիջյան հարաբերություններին և հնարավոր է, եթե հիմա չընդունվի և անհրաժեշտ միջոց չձեռնարկվի, կհանգեցնի անկանխատեսելի, նույնիսկ դժվարուղղելի հետևանքների»[15]: Այդ նիստում ընդունված որոշումը չէր բխում հայության շահերից: Եվ այն ժամանակ, երբ օպերայի հրապարակում հավաքված հարյուր հազարավոր ցուցարարներ «Արցախ» էին գոչում, այդ նույն ժամանակ Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն հակահայ քայլեր էր մոգոնում:

1988-ի փետրվարի 20-ին Արցախում տեղի են ունեցել նաև այլ իրադարձություններ: Այդ նույն օրը, օրվա երկրորդ կեսին, տեղի է ունեցել ժողովրդական պատգամավորների Ստեփանակերտի քաղաքային խորհրդի 20-րդ գումարման չորրորդ արտահերթ նստաշրջանը, որին քաղխորհրդի 110 պատգամավորներից ներկա էին 92-ը: Նստաշրջանը քննարկում է «О положении, создавшемся в г. Степанакерте в связи с требованием трудящихся о передаче Нагорно-Карабахской автономной области из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР» հարցը: Առաջինը ելույթ է ունենում ժողպատգամավոր, Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի Մարգո Բալասանյանը: Նա նշում է, որ իրենց թատրոնը Ադրբեջանում միակ հայկական թատերական օջախն է, որը սպասարկում է հանրապետությունում բնակվող 500000 հայությանը: Մինչև հիսունական թվականների վերջը Ադրբեջանում գործել է հայկական չորս թատրոն՝ Բաքվում, Կիրովաբադում, Ստեփանակերտում և Շուշիում: Դրանցից այսօր մնացել է միայն Ստեփանակերտի թատրոնը: Աշխատանքի բնույթով ես հաճախակի եմ լինում Ղարաբաղի ամենածայրամասային բնակավայրերում և իրազեկ եմ այն տխուր փաստին, որ սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հետևանքով մեր լեռնային գյուղերը դատարկվում են: Դա այն պատճառներից մեկն է, որը արցախցիներին ստիպում է իրենց երկրամասը վերամիավորել Հայկական հանրապետության հետ: Բաքվում շուրջ 300000 հայ կա, սակայն մենք զրկված ենք նրանց համար ելույթ ունենալուց: Ղարաբաղից հեռացած հայերին փոխարինելու են գալիս ադրբեջանցիները, որոնց թիվը գնալով ավելի է շատանում: Եթե այդպես շարունակվի, շուտով երկրամասում իշխող կհանդիսանան թուրք-ազերիները: Հարգելի պատգամավորներ, մեր թատրոնի կոլեկտիվը ինձ հանձնարարել է հայտնել իրենց ցանկությունը՝ Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի հետ[16]:

Մարզի մշակույթի արհմիության կոմիտեի նախագահ, ժողպատգամավոր Լաուրա Գարայանը իր ելույթում նշում է, թե պատմական Փոքր Սյունիքը՝ Ղարաբաղը մինչև 1920-ական թվականների սկիզբը գտնվել է Հայաստանի կազմում: Սակայն հետո կատարվել է պատմական կոպիտ սխալ: Ես, որպես պատգամավոր, պահանջում եմ այն ուղղել, որը մարզի ամբողջ բնակչության ցանկությունն է: Մեր մարզը զրկված է բազմաթիվ հնարավորություններից, նույնիսկ չունենք հրատարակելու իրավունք, չունենք հայերեն լեզվով կնիք, մշակույթի պալատ, անչափ թույլ է մարզի կուլտուրլուսավորական հիմնարկների նյութական բազան և նման հարցեր: Մեր բարձրացրած հարցում ազգային ոչ մի միտում չկա: Ես լիովին հավատում եմ, որ այն կվճռվի դրականորեն[17]:

(Շարունակությունը՝ հաջորդ համարում)

13. Նույնը, թ. 29-30:
14. «Правда», 22.02.1988: Անկասկած այդ տվյալները Մոսկվա է հաղորդել Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը և, ինչու չէ, նաև որոշման նախագիծը:
15. ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 2:
16. ԼՂՀ ՊԱ, ֆ. 135, ց. 2, գ. 186, թ. 7:
17. Նույնը, թ. 8:

Հայկական Հարցը եւ տարածաշրջանի նաւթի պաշարները

Ժիլբերտ Մուշկանբարեան

Հայկական Հարցը որպէս միջազգային յարաբերութիւնների եւ դիւանագիտութեան խնդիր ձեւաւորուել է 19-րդ դարի երկրորդ կէսին, սկզբնաւորելով որպէս Օսմանեան կայսրութեան հպատակ արեւմտահայերի անհատական եւ հաւաքական անվտանգութեան հարց, հետզհետէ այն ընդլայնելով իր բովանդակային սահմանները, 19-րդ դարի վերջից եւ յատկապէս Առաջին աշխարհամարտի սկզբից այն վերածուել է որպէս 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան զոհ դարձած Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիայի որոշ տարածքները բնակեցնող հայերի, հայոց պետականութեան եւ այդ պետականութեան ոտնահարուած իրաւունքների վերահաստատման, տարածքային, նիւթական եւ բարոյական իրաւունքների վերականգնման, Արցախի եւ պայքար յանուն Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման խնդրի:

Հայկական Հարցի հետ կապուած խնդիրները լայն լուսաբանում են ստացել հայ թէ օտար գրականութեան եւ մամուլի էջերում, արուել եւ արւում են բազմաթիւ պատմական եւ քաղաքական վերլուծութիւններ, սակայն գոյութիւն ունեն այնպիսի վարկածներ, որոնք համեմատաբար քիչ են ուսումնասիրուած, եւ որոնցից մէկի բացայայտումով պարզւում է, որ տարածաշրջանում բազմաթիւ հարցերի կողքին Հայկական Հարցի լուծումը սերտօրէն առնչւում է տարածաշրջանի նաւթի պաշարների հետ:

Իրանահայ մտաւորական Հրայր Խալաթեանը[1] դեռ 1977 թ.-ին իր «Հայկական Հարցը եւ քարիւղը» յօդուածում անդրադառնա-

[1] Իրանահայ մտաւորական, 1929-1988, Իրանի իսլամական յեղափոխութիւնից յետոյ եղել է իրանահայութեան պատգամաւոր Իրանի սահմանադրութիւնը մշակող բանիմացների ժողովում 1979 թ. և հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Իրանի յետյեղափոխութեան շրջանի առաջին խորհրդարանում 1980-84 թթ., եղել է «Ալիք» օրաթերթի խմբագրապետը: Խալաթեանի գրչին են պատկանում հայերէն և պարսկերէն լեզուներով շուրջ 20 գրքեր և գրքոյկներ, նաև բազմաթիւ գաղափարական, քաղաքական և տնտեսական յօդուածներ, որոնք լոյս են տեսել հայկական և պարսկական թերթերում: Միայն Իրանում հայերէն լեզով հրատարակւող «Ալիք» օրաթերթում հեղինակել է շուրջ 250 խորագրով յօդուածներ:

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY



Հրայր Խալաթեան

լով հայկական վիլայեթներում նաւթի պաշարների գոյութեանը գրում է. «...1918 թ. մայիսին հիմնել էր մի անկախ հանրապետութիւն, որի գոյութիւնը պաշտօնապէս ճանաչել էր Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ միւս դաշնակիցների կողմից, որպէս սուվերէն եւ անկախ պետութիւն: Հետագային Սեւրի դաշնագրով, որը ստորագրել էր 1920 թ.-ի օգոստ. 10-ին, Հայկական Հանրապետութիւնը օրինական իրաւատէրն էր հռչակել թրքահայկական չորս վիլայեթների: Պրեզիդենտ Վիլսոնը՝ գծելով Հայաստանի սահմանները, այդ չորս շրջանները ներառել էր անկախ Հայաստանի սահմանների մէջ, որով էլ կոչում էր Վիլսոնեան Հայաստան»:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետութեան տարածքային իրաւունքները յստակեցնող փաստաթղթերից կարեւորագոյնը ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի միջեւ սահմանը որոշող Իրաւարար վճիռն է, որը ուժի մէջ է մտել 1920 թ. նոյ. 22-ին: Սոյն իրաւական փաստաթղթով Փարիզի Խաղաղութեան վեհաժողովում Հայաստանի Հանրապետութեանը ճանաչեցին եւ իրաւունքները հաստատեցին հայութեան հայրենիքի մի փոքր մասի՝ նրա հիւսիս-արեւելեան հատուածի վրայ, որով Հայաստանի իշխանութիւնը ճանաչուեց նախկին Օսմանեան կայսրութեան Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգների մի մասի վրայ:

«...Վիլսոնի գծած Հայաստանի սահմաններում,- գրում է Խալաթեանը,- չորս հայկական վիլայեթներից երեքի մէջ քարիւղի մեծ շտեմարաններ կային եւ ահա ամեն ինչ դառնում էր դրանց շուրջ: Դաշնակիցները, որ Սեւրի դաշնագրով թրքահայ վիլայեթները ճանաչել էին որպէս հայութեան սեփականութիւնը, Լոզանում չը պնդեցին այդ իրաւունքի վրայ եւ անորոշ դրութեան մէջ թողեցին այդ խնդիրը: Եւ ԱՄՆ-ի արտաքին նախարարութիւնը եւ նրա թիկունքում Standard Oil[2] trust-ը պահանջելով Լոզանի դաշնագրի շուտափոյթ վաւերացումը ԱՄՆ-ի օրենսդիր ժողովների կողմից, նպատակ ունէր հաստատել եւ օրինականացնել Թուրքիայի տերիտորիալ Status quo-ն: Այսպիսով,



Բաքմանի (Սասունի մօտակայքում) նաւթազտարանը, 1954 թ.

[2] Standard Oil ընկերութիւնը, ամերիկեան նաւթարդիւնաբերական եւ արտածման ընկերութիւն էր, որը հիմնադրուել էր 1870 թ.-ին Ամերիկայի Օհայօ նահանգում John D. Rockefeller-ի միջոցով եւ այդ ոլորտում հանդիսանում էր աշխարհի ամենահին եւ մեծ ընկերութիւններից մէկը:

հայկական պահանջները յետ կը մղէին ու թուրք կառավարութիւնը իրաւապէս եւ օրինապէս տիրանալով քարիւղի շտեմարաններին բանակցութեան մեջ կը մտնէր Standard Oil-ի հետ»:

Վաղուց արդէն Standard Oil ընկերութեան միջոցով բացայայտուել էր այն իրողութիւնը, որ հայկական հողերում առկայ են նաւթի հարուստ պաշարներ, իսկ այդ հողերը Հայաստանին չը վերադարձնելու գլխաւոր դրդապատճառներից մէկը հէնց այս յայտարարութիւնների առկայութեան փաստն է եղել:

Խալաթեանը աւելացնում է. «...1922 թ.-ի Standard Oil ընկերութեան ընդհանուր տնօրէն Alfred C. Bedforde գրում էր ի միջի այլոց հետեւեալը. ...Մեսոպոտոմիայի քարիւղադաշտերից յետոյ, առանձնայատուկ արժէք են ներկայացնում Թուրքիայի քարիւղային շրջանում այն քարիւղաշտեմարանները, որոնք գտնւում են Հայկական վիլայեթներից Էրզրումում, Վանում եւ Բիթլիսում: Գտնելով Մեսոպոտոմիայի քարիւղադաշտերին զուգահեռ ուղղութեան վրայ հայկական քարիւղաշտեմարանները աշխարհագրականօրէն շարունակութիւնն են Իրանի հարաւային շրջանի քարիւղային զոնայի եւ հիւսիսային քարիւղադաշտերի, որոնք գնում հասնում են մինչեւ Բաքու:

Standard Oil-ի շենքը Նիւ Եորքում

Արեւմտեան եւ Հարաւ-արեւմտեան Հայաստանի նաւթային պաշարները

Հայկական քարիւղադաշտերը տարածուն են իրանականի նման եւ գրաւում են 220 քառակուսի մղոն տարածութիւն: Հայկական քարիւղադաշտերը եւրոպական աշխարհամասի մոտ գտնւող կարեւոր այն քարիւղադաշտերից են, որոնք վերջերս են բացայայտուել եւ դեռ չեն օգտագործուած»:

Առաջին աշխարհամարտի ընթացքում ԱՄՆ-ի եւ Օսմանյան կայսրութեան միջեւ պատերազմ չէր յայտարարուել, սակայն թուրքերը 1917 թ. ապրիլի 20-ին խզել էին իրենց դիւանագիտական յարաբերութիւնները ԱՄՆ-ի հետ: Պատերազ-

մի աւարտից 10 տարի յետոյ բնական էր, որ կողմերը պիտի ձգտէին վերահաստատել դիւանագիտական յարաբերութիւնները. յատկապէս, որ ամերիկեան ընկերութիւնները յարաճուն տնտեսական շահեր ունէին Թուրքիայում:

Անժխտելի իրողութիւն է, որ աշխարհում նաւթը, բնական գազը եւ այլ օգտակար հանածոներ կարեւորագոյն դեր են խաղում դիւանագիտական յարաբերութիւնների, միջազգային քաղաքականութեան, երկրների միջեւ առեւտրատնտեսական յարաբերութիւնների հաստատման, նոյնիսկ պատերազմների հրահրման, խաղաղութեան հաստատման եւ յարաբերութիւնների կարգաւորման մէջ: Այսպիսով ակներեւ է այն գլխաւոր դրդապատճառը, որը դարձրեց Հայաստանը եւ Հայկական Հարցը խաղաթերթիկ գերտէրութիւնների ձեռքում, որոնք իրենց տնտեսաքաղաքական շահերից դրդուած սկսեցին վարել եւ մինչ օրս վարում են թուրքամէտ քաղաքականութիւն:

1920 թ. նոյ. 22-ի վճռով Հայաստանին անցած տարածքները նախկին Օսմանեան կայսրութեան Էրզրումի, Վանի, Բիթլիսի եւ Տրապիզոնի վիլայեթների զգալի մասը մինչ օրս իրաւականօրէն Հայաստանի մաս են կազմում: Հայկական Հարցի լուծումը պիտի գործնականում նպաստի ողջ տարածաշրջանում կայուն խաղաղութեան հաստատմանը, տնտեսական բազմակողմանի շահերի կենսագործմանն ու տարածաշրջանում Հայաստանի քաղաքական կշռի բարձրացմանը, ուստի ճիշտ շահարկելով իր իրական հիմք ունեցող խաղաքարտերը Հայաստանը պէտք է նախապատրաստուի աշխարհաքաղաքական հետագայ անխուսափելի տեղաշարժերին:

Թւում է թէ արդէն հասունացել է այն պահը, որ հայ ժողովուրդը Թուրքիայից իր տարածքային պահանջների կողքին վերահաստատելով իր իրաւունքները հայկական այս երեք վիլայեթների նկատմամբ արձանագրի տնտեսական վերելք ի շահ Հայաստանի եւ հայ ժողովուրդի:

Օգտագործուած գրականութիւն.

1- Խալաթեան Հ., «Հայկական Հարցը եւ քարիւղը», «Ալիք», յունիսի 8 եւ 9, 1977 թ., Թեհրան:

2- Խալաթեան Հ. (1929-1988) կենսագրական, «Ալիք»-ի 75-ամեակը, տպարան «Ալիք», 2007 թ., Թեհրան:

Համարկում՝ տարանջատումով

(Այսրկովկասի համալիր անվտանգության տեսանկյունը)

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ
Քաղաքական գիտությունների դոկտոր,
ՀՊՄՀ պրոֆեսոր, քաղաքագիտության և
իրավունքի պատմության ամբիոնի վարիչ

Երկբևեռ աշխարհի անէացումից հետո գլոբալ իմաստով շատ բան փոխվեց Երկիր մոլորակի վրա: Փոխվեց միջազգային անվտանգության համակարգը, խոշոր տերությունների դերակատարությունը աշխարհակառույցում, միջազգային կազմակերպությունների գործունեության տրամաբանությունը այնտեղ և այլն: Պարզ դարձավ մի բան. մինչև ատամները զինված միջուկային գերտերությունները փոխադարձ ոչնչացման ապառնալիքի տակ հակվեցին կոնսենսուսի որոնման և ենթադրելի է՝ գալիքում այդ գործելաոճը կդառնա ավելի ճկուն և տարողունակ: Այդ իմաստով միջազգային անվտանգությունը զգալիորեն հուսալի է և ապահով՝ աշխարհի խաղաղությունը: Դեռևս 1983 թվականին Մայքլ Մանդելբաումը բնութագրելով գերտերությունների միջև առաջացած «միջուկային պատը», գրում էր. «Տարբերությունը անցյալի պատերազմների միջև և գլոբալ միջուկային կոնֆլիկտների միջև տարբերություն է ավերումի և չքացումի միջև, դարաշրջանի ավարտի և մարդկային մշակույթի վերջի միջև» (Mandelbaum M., The Bomb, Dreat and Eternity.- «International Security», Cambridge (Mass.), 1983, Vol.5. № 2, p.3):

Հեղինակի որոշ դրույթներին համաձայն չլինելով, խմբագրությունը հոդվածում արծարծված խնդիրների շուրջ, ակնկալում է այլ քաղաքագետների մասնակցությամբ շահագրգիռ խոսակցություն:

Սակայն հետսառըպատերազմյան զարգացումները ցույց տվեցին նաև, որ նույն խոշոր տերությունների միջև առկա և առաջացող հակասությունները «իջեցվեցին» առանձին և հակամարտություններով ավանդաբար հայտնի տարածաշրջաններ: Աշխարհի ռազմավարական քարտեզի վրա ֆիքսվեցին հակամարտությունների «թափառող» առկայծումներ, երբեմն ուժգին բռնկումներով (Բալկաններ, Միջագետք, Աֆղանստան և այլն): Այս պրակտիկան դարձավ, թերևս, նոր աշխարհակարգի հաստատման «բնավորությունը»: Այսպիսով, եթե աշխարհի անվտանգությունը միջազգային անվտանգության իմաստով շահեց, կամ առնվազն չվնասվեց, ապա տարածաշրջանային իմաստով դարձավ ավելի հեղհեղուկ: Այստեղ անվտանգության ներքին շեմը էապես իջավ, բումերանգի էֆեկտով, սակայն, հարվածելով նույն միջազգային անվտանգությանը:

Հիմնախնդիրն իր առանձնահատուկ դրսևորումը գտավ չքացած ԽՍՀՄ ազդեցության գոտում և նրա նախկին տարածքում, որ հիմնականում նախկին Ռուսական կայսրության տարածման վիթխարի շրջանն է: Տվյալ առանձնահատկությունը պայմանավորվեց մեծ չափով Արևմուտքի կողմնակալ և «տարօրինակ» վարքագծով. իր դավանած արժեքների համակարգից ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կիրառելի (հետևապես՝ լեգիտիմ) համարելով նախկին միութենական հանրա*պետությունների* (և ո՛չ ժողովուրդների) հանդեպ, այդ թվում ազգային պետությունների քողի տակ *էթնոկրատիա* ստեղծող գաճաճ կայսրությունների (Ադրբեջան, Վրաստան և այլն), այն մերժեց բառիս բուն իմաստով գոյապայքար մղող աֆտոխտոն (անդրենածին) ժողովուրդներին (հայությանը Արցախում, լեզգիներին, թալիշներին, աբխազներին, օսերին և ուրիշների), ինչը վկայությունն էր ու արտահայտությունը «հին ու բարի ժամանակների» գաղութարարության և դասական իմպերիալիզմի:

Բնական էր հիշյալ և այլ ժողովուրդների ահռելի հիասթափությունը, կոնկրետ, Արևմուտքից և թերևս նրա գովազդած արժեքներից: Քանզի նույն Արևմուտքը կամաակամա կլլեց իր կողմից արհամարհված և տասնամյակներով անարդար դիտված «չարիքի կայսրության» մտահղացումների խայծը: Արևելքից սպասելիքներ չկային: Ուստի զարմանալի չէ, որ նախկին կայսրությունից ժառանգություն մնացին «տաք կետեր» որպես *իբրև թե* ամբողջական տարածաշրջաններ: Դրանցից մեկը (ցցունը) *Այսրկովկասն է* (դիտված Երևանից, Թեհրանից), Անդրկովկասը (դիտված Մոսկվայից), Հարավային Կովկասը (դիտված Փարիզից):

Վերահաստատվեց այն իրողությունը, թե «միջազգային անվտանգությունը» առանձին պետությունների և տարածաշրջանային միավորների միջև կոնֆլիկտայնության մակարդակի բնութագիր է: Եվ ցավալիորեն նույնը մնաց ոչ միայն պատկերացումը, այլև չփոխվեց առաջարկվող լուծումների ձևաչափը՝ ավանդականը, նույնն է թե իմպերիալիստականը: Քանզի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին աշխարհի տերերի շաղակրատանքները շարունակվում էին (և են) բազմազգ երկրների տիտղոսակիր ազգերի պետությունների տարածքային ամբողջականության մասին պնդումներով, դրանով իսկ դուռ բաց թողնելով տվյալ պետությունների ներքին գործերին միջամտելու և անհրաժեշտության դեպքում՝ կոնֆլիկտների կառավարման համար:

Մինչդեռ, զանգվածային ոչնչացման զենքով գերհագեցած և էթնիկական հակամարտություններով պայթյունավտանգ աշխարհի իրական անվտանգությունը պահանջում է այլ մոտեցումների որոնում, ազգային-պետական շահերի ներդաշնակ համադրում, այսինքն՝ հրաժարում իմպերիալիզմից: Իսկ երբեմն էլ՝ պատմական անարդարությունների սրբագրում, որ նշանակում է գալիքում համանման անարդարությունների հանդեպ գայթակղության բացառում:

Որպես մոդել (բնորդ) կարելի է դիտարկել Այսրկովկասը (այսուհետև՝ Հարավային Կովկաս), որն, ընդունված է, Հյուսիսային Կովկասի հետ միասին կազմում է մի ամբողջություն, մի պնդում, որը լինելով միակողմանի, չի ար-



Մայքլ Մանդելբաում

տացոլում ռազմավարական իրողությունների խորքը: Քանզի տարածաշրջանն ամբողջություն է իր բաղադրիչներով՝ Հյուսիսային և Հարավային Կովկասներ, քրդա(թրքա)բնակ Կենտրոնական Հայաստան ժամանակակից Թուրքիայի տարածքում, Հյուսիսային Իրան (Իրանական Ատրպատական): Այստեղ Հարավային Կովկասն ունի կապող/բաժանող գործառույթ: Հետևապես, իրադրության ճիշտ ախտորոշումը Հարավային Կովկասում, կայունության երկարաժամկետ ապահովումն այստեղ, որը ենթադրում է նրա կառուցվածքի մեջ մտնող պետությունների ու ժողովուրդների կենսական շահերի ներդաշնակ համադրում, առկա մշակույթների (քաղաքակրթությունների տարրերի) զարգացում, դրականորեն է ազդում ինչպես Հյուսիսային Կովկասի (ռուսական խազարական եռանկյունու), այնպես էլ նրան հարող Իրանի ու Թուրքիայի տարածքների կայունության վրա:

Ուստի, կայուն և անվտանգ Հարավային Կովկասի համար անհրաժեշտ է.

1) ընդունել տարածաշրջանի «երկրաքաղաքական իրականությունը», այսինքն՝ ճանաչել գաճաճ կայսրություններից պոկված «ինքնահռչակ» պետությունների անկախությունը: [Կարծես թե կա պետությունների ծննդի այլ ճանապարհ, քան ինքնահռչակ լինելը, ինչևէ]:

Ուշադիր լինենք. Ռուսաստանից անկախության ճանաչման խնդրագրում Աբխազիայի ժողովրդական ժողովի որոշման մեջ (2006 թ., հոկտեմբերի 18) ասվում է. «Աբխազիան օժտված է ինքնիշխան պետության, համաշխարհային հանրության կողմից ընդունված, բոլոր անհրաժեշտ նշաններով (признак) և անկապտելի հատկանիշներով (атрибут), որի կազմակերպումն ու գործունեությունը համապատասխանում է, ներկայացուցչական ժողովրդավարության և իշխանությունների բաժանման հիմքի վրա, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության բոլոր չափանիշներին»: Կարող ենք պնդել, որ անկողմնակալ փորձագետը, եթե ցիտված տեքստում «Աբխազիան» փոխարինի «Հյուսիսային Օսիա», «Արցախ՝ Լեռնային Ղարաբաղ» հասկացություններով, տեքստն իր խորքով ամբողջությամբ կարտացոլի քաղաքական իրողությունները «ինքնահռչակ» պետական երիտասարդ կազմավորումներում՝ առավել, քան գաճաճ կայսրություններում: Փաստերն այնքան ակնառու են... Այս պարագայում նույնիսկ կարևոր էլ չէ՝ պետականության կայացման տեսանկյունից, թե ինչպիսի վճռական դեր խաղաց ՌԴ «հումանիտար ինտերվենցիան» օս ժողովրդին Վրաստանի կազմակերպած «հումանիտար աղետից»՝ ցեղասպանությունից փրկելու գործում, և որպես հումանիտար ինտերվենցիայի անմիջական արդյունք՝ Աբխազիայի և Հարավ. Օսիայի անկախությունների ճանաչումը ՌԴ կողմից:

2) Իմաստավորել տարասեռ Հարավային Կովկասի անկայունության պատմական տեսանկյունը: Անդրկովկասի «փոխարքաներից» Արկադի Վոլսկին իրավացիորեն արձանագրում է, թե ԽՍՀՄ լուծարումից հետո Անդրկովկասի երկրաքաղաքական իրականությունը «ըստ էության մնաց նույնը, ինչ էր XIX դարում» (Вольский А., Геополити-

ческая реальность в Закавказье.- «Московские новости», 1992, 4 октября): Սակայն, եթե Վոլսկին լիներ ավելի հետևողական, կխոստովաներ, որ ԽՍՀՄ քայքայման պահին տարածաշրջանը հայտնվեց «սառեցված» հակամարտությունների այն թնջուկի դիմաց, որոնք ծնունդ էին *ինքնահռչակ քեմալական և բոլշևիկյան արևմտամերժ իշխանությունների* փոխըմբռնման ու լայն համագործակցության:

Ռիբենտրոպ-Մոլոտով համաձայնության նախատիպը հանդիսացող այս աննախադեպ գործարքի հիմքը դրվեց Մուստաֆա Քեմալի՝ Վլադիմիր Ուլյանովին ուղղված 1920 թվականի ապրիլի 26-ի «գործնական» («businesslike») նամակի հիման վրա և Ալեքսանդրապոլի դաշնագրի շուրջ բոլշևիկների հետ Կարաբեքիրի նախնական պայմանավորվածության շրջանակներում (Տես Mango A., Ataturk, London, 1999, էջ 357): Երիտթուրքերի միջավայրի «եվրոպականացած» սույն գործիչը, մասնավորապես, գրում է. «Եթե խորհրդային ուժերը նախատեսում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով, իրենց ազդեցության շնորհիվ, հարկադրել Վրաստանին մտնել դաշինքի մեջ և ձեռնարկել Կովկասի տարածքից անգլիացիների վտարումը, թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում ռազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ և պարտավորվում է հարկադրել Ադրբեջանական հանրապետությանը՝ մտնելու խորհրդային պետությունների կազմի մեջ» (АВП СССР, ф. 132-референтура по Турции, п. 3, оп. 2, д.I, лл. II, տե՛ս նաև Mango A., Atatürk, London, 1999, p. 278):

Զարմանալի ճշգրտությամբ, Անդրկովկասը ուրիշի հայրենիքների իմպերիալիստական հոշոտման սկզբունքով (դավադրությունը վերջնականորեն ձևակերպվեց 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագրով) իր ռազմավարական կերպարն ու վերջնական տեսքը ստացավ 1921 թվականի վերջերին և իր լիցքը պահպանեց անփոփոխ, ընդհուպ ԽՍՀՄ լուծարում (Տես Մարկ Ֆեյգինի ուշագրավ հոդվածը. Фейгин М., Закавказский узел.- «Новый мир», 1998, No9, էջ 134-155): 1915 թվականի ապրիլի 24-ի աղետից հետո այս անգամ արդեն գործարքը կատարվեց Արևելյան Հայաստանի անդամահատման և Հարավային Կովկասի ավտոխտոն (անդրեանածին) այլ ժողովուրդների տարածքների ու մշակույթների, նրանց քաղաքակրթական մասունքների աճուրդի հաշվին՝ հօգուտ Ադրբեջանի թյուրքերի (թուրք-թաթարների) և տարածաշրջանում վրացական տարրի:

Բնական էր, որ ԽՍՀՄ կազմալուծումը դետոնատորի դեր խաղաց, Դմիտրի Սախարովի գնահատականով՝ «փոքր կայսրությունների» կրնկի տակ հայտնված ժողովուրդների [հայերն Արցախում, լեզգիների, թալիշների, աբխազների, (հարավային) օսերի] ազատագրության համար: Օգտվելով ինքնորոշման իրենց բնական իրավունքից և խստորեն կիրառելով ԽՍՀՄ համապատասխան օրենսդրության տառն ու ոգին, հետևելով նախկին հանրապետությունների օրինակին, ոգևորված արևմտյան ժողովրդավարության արժեքներից, նրանք հռչակեցին սեփական ազգային տարածքներում, մեծավ մասամբ կրճատված խորհրդային տարիներին, իրենց ինքնիշխանությունը: Եվ գլխավորը, մարտի դաշտում, գաղութարարների դեմ անհավասար ու ծանր կռիվներում պաշտպանեցին իրենց սրբազան իրավունքները: Սակայն, ի զարմանս իրենց, իրենք ոչ «հասուն» և ոչ էլ «երիտասարդ» ժողովրդավարությունների կողմից համակրանք չտեսան և նշմարելի օժանդակություն չստացան:

3) Իմաստավորել ու գնահատել տարածաշրջանի մշակութային-քաղաքակրթական *եզակիությունը* (уникальность) և ապահովել նրանց անվտանգ զարգացումը՝ իրավահավասար պայմաններում: Տվյալ պարագայում անհրաժեշտ է արժևորել «ինքնահռչակ» պետությունների տիտղոսակիր ազգերի՝ արցախահայության, աբխազների, օսերի ինքնատիպությունն ու մշակութային ինքնությունը, ազգային-ազատագրական պայքարի և պետականության պատմական հարուստ ավանդույթները, առկա ու երբեմնի գերազան-

Ռիբենտրոպ-Մոլոտով համաձայնություն

ցությունը «սեփական» գաղութարարների հանդեպ, ազատագրական պայքարի տարիներին հանդես բերած կամքն ու ազգային բարձր ինքնագիտակցությունը և այլն:

Ասվածի ենթատեքստում քիչ նշանակություն չունի երկու հանգամանքի գիտակցումը.

ա) գաճաճ կայսրությունների պետականակիր ազգերի և «չճանաչված», «ինքնահռչակ» պետությունների էթնոմշակութային, էթնոհոգեբանական որոշակի անհամատեղելիությունը. իր ինքնությունը ցայսօր որոնող ալթայան ժողովուրդ շիամահմեդական եկվոր թյուրքեր և Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու հետևորդ քրիստոնյա անդրենածին հնդեվրոպական ժողովուրդ (արցախա)հայեր, Ուղղափառ կովկասյան ժողովուրդ վրացիներ և լեզվով ու ծագումով հյուսիսկովկասյան ադիգեյան խմբին մերձ, զարգացած էթնոհոգեբանությամբ ու էթնոմշակույթով, այլ քաղաքական մշակույթ ունեցող աբխազներ, հնդեվրոպական ժողովուրդների իրանական խմբին պատկանող, այսպես կոչված՝ կոբանյան (кобанский) մշակույթի կրող, հռչակավոր ալանների ժառանգորդ (հարավային) օսեր՝ զարգացած էթնոմշակույթով:

բ) Իրենց ինքնության պահպանման և ինքնիշխանության համար հարյուրավոր տարիների, մասնավորապես խորհրդային սոցիալիմպերիալիզմի գոյության առաջին տասնամյակների, պայքարի փորձը:

1921 թվականի մարտի 31-ին հռչակվեց *անկախ* Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն Աբխազիան, որն իր այդ կարգավիճակը պահպանեց ընդհուպ 1921 թվականի դեկտեմբեր, երբ ԽՍՀ Աբխազիան *պայմանագրային* հիմունքներով մտավ (մտցրի՞ն) Վրաստանի ԽՍՀ կազմ: Այս շրջանից սկսած մինչև 50-ական թվականների սկզբներ, փորձագետների գնահատմամբ, տեղի է ունենում Աբխազիայի և նրա բնիկ ժողովրդի վրացականացման գործընթաց, պարզ է՝ նացիոնալբոլշևիկներ Բերիայի և Ստալինի չարաշուք հայացքների ներքո: Սակայն, պատմական հանգամանքների թելադրանքը երբեք էլ չհամակերպեց աբխազ ժողովրդին իր գաղութային կարգավիճակի հետ: Իր հայրենիքից վերջնականապես արտամղվելու վտանգի գիտակցումով (փորձագետը գրում է. երկու հա-

զար տարվա գրավոր պատմություն ունեցող աբխազ ժողովուրդը նույն պատմության կողմից իջեցվեց հանրապետության ազգաբնակչության 17%-ին) աբխազ «ինտելեկտուալներն ու կուսակցական ղեկավարները» 1931, 1957, 1965, 1978 և 1989 թվականներին դիմեցին Կենտրոն՝ Վրաստանից առանձնանալու և Ռուսաստանին միանալու խնդրանքով, իսկ «պերեստրոյկայի» և «գլասնոստի» տարիներին, Վրաստանից ամբողջովին անկախանալու նպատակով, որպես առաջին քայլ, փորձեցին վերադառնալ մինչև 1931 թ. գոյություն ունեցած կարգավիճակին՝ Վրաստանի հետ *պայմանագրային* հարաբերությունների: Արդյունքում վրացի նացիոնալիստների կողմից սանձազերծվեց մի պատերազմ, որի տրամաբանական և պատմական ավարտը քաջ հայտնի է (շարադրանքն ըստ Зверев А., Этнические конфликты на Кавказье, 1988-1994.- Спорные границы на Кавказье. Под ред. Б. Коппитерса, М., 1996, էջ 41-43):

Վրաց-օսական թշնամանքը արմատներով «ձգվում» է 1917-1921 թվականներ, երբ Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետության մենշևիկյան կառավարությունը փորձում էր «անգթորեն» («беспощадно») խեղդել օսական ապստամբական շարժումը և դա օս ժողովրդի պատմական հիշողության մեջ մնացել է ցեղասպանության կիրառման չհաջողված փորձ: (Հարավային) Օսերի 3-4 տարվա ռազմական կատաղի հակամարտությունը Վրաստանի հետ շարունակվեց ընդհուպ 1921 թ., երբ այն 1922 թվականի ապրիլի 20-ին ընդգրկվեց արդեն խորհրդայնացած Վրաստանի կազմ որպես Հարավային Օսիայի ինքնավար մարզ (ՀՕԻՄ): Գորբաչովյան բարեփոխումները ոգևորեցին նաև (հարավային) օսերին, որոնք 1989 թ. նոյեմբերի 10-ին փորձեցին ստեղծել Խորհրդային Վրաստանի կազմում ինքնավար հանրապետություն, թերևս, իրենց հյուսիսի հայրենակիցների օրինակով, սակայն, ի զարմանս իրենց, մերժվեցին անմիջապես: Զվիադ Գամսախուրդիայի խորհրդարանը 1990 թվականի դեկտեմբերի 11-ին լուծարեց Հարավային Օսիայի ինքնավար մարզը: Այպիսով, տիտղոսակիր ազգն ինքը օգտվելով «պերեստրոյկայի» բարիքներից, այն մերժեց այլ ժողովուրդների հանդեպ: Վրաստանը Հարավային Օսիայի հարցում ևս վերադարձավ մենշևիկյան Վրաստանի քաղաքականությանը՝ *Դվալեթիայում* հռչակելով Շիդա Քարթլի/Սամաչաբլո տարածաշրջանի «վերականգնումը» (Տե՛ս Кабисов Аль., Конфликты в Южной Осетии и ценность опыта Аландской автономии для разрешения конфликтов в Закавказье (էջ 154-158).-Этнополитические конфликты в Закавказье: их истоки и пути решения. Мериленд, 1997, էջ 156):

2008 թվականի օգոստոսի 8-ի վրացական «բլիցկրիգը» օս ժողովրդին Հարավային Օսիայում կանգնեցրեց իսպառ ոչնչացման մահացու վտանգի առաջ. ռուսական «հումանիտար ինտերվենցիան» և Ռուսաստանի կողմից Հարավային Օսիայի անկախության ճանաչումը ցույց տվեցին «ինքնահռչակ» հանրապետությունների անվտանգության ու առաջընթացի միակ և իրատեսական ուղին, կայսրությունների, թեկուզև գաճաճ, հավակնությունների ավարտի վախճանը...

Արցախի խնդիրը, որպես իբրև թե «վիճահարույց» հարց, ծնվեց, ըստ էության, «Կովկասի թաթարների», «Անդրկովկասի թուրքերի»՝ 1918 թվականի սկզբներից սկսյալ արդեն «ադրբեջանցիների» *«արևելա-կովկասյան թյուրքական» պետության* առաջացման օսմանա-թուրքական նպատակադրման հետ, սրվեց՝ Բաթումի դաշնագրի (1918 թ. հունիսի 4) ստորագրումից հետո, երբ կոնկրետ իրողությունների հարկադրանքով Արցախը հայկական Բաքվի հետ միասին իր վրա վերցրեց դեպի նավթաշխարհ արշավող օսմանյան հորդաների հարվածի ծանրությունը: (Ինչպես հանրապետության շրջանում, այնպես էլ խորհրդային տարիներին արցախահայության պայքարի մասին շատ է գրվել և անաչառ հետազոտողին ու ընթերցողին ամեն ինչ հայտնի է: Հայտնի է նաև նավթի գործոնի ու ռուսական պետության գերեզմանափոր բոլշևիկների խաղացած չարաղետ դերի մասին Արցախի հարցում ևս. այս ուղղությամբ հրատարակված գրականության օվկիանո-

սից, սակայն, կառանձնացնեինք Ալեքսեյ Զվերևի Этнические конфликты на Кавказе, 1988-1994 հոդվածի 10-40 էջերը.- Տե՛ս Спорные границы на Кавказе. Под ред. Бруно Коппитерса, М., 1996)): Ինչևէ. Արցախի՝ հայոց ազգային-ազատագրական պայքարի այդ արծվաբույնի, խորհրդային բանակի առաջնակարգ մարշալների ու գեներալների անսպառ մատակարարի տասնամյակների պայքարն ու կռիվը տվեց այն արդյունքը, ինչը այսօր առկա է: [Ընդսմին, Ադրբեջանում չեն կարող չգիտակցել, որ Արցախի հանրապետության ինքնապաշտպանական ուժերը երկու թևով կախվել են Եվլախի և Հորադիզի վրա]:

Իրենց եվրոպական արժեքների մոլեռանդ հետևորդներ հռչակած գաճաճ կայսրությունների «էլիտաների» անհանդուրժողականության, մեծապետական շովինիզմի և իմպերիալիզմի հետևանքով այսօր տարածաշրջանը տարանջատված է և ապահամարկված («дезинтегрированным»), դարձել է անկայունության աղբյուր, որի ալաքներն ուղղված են բոլոր ազիմուտներով: Եթե խորհրդային կայսրության ընդերքում ձևավորված միտումները պահպանվեն, այլ կերպ՝ «ինքնահռչակ» պետությունները վերադարձվեն գաղութարար կայսրությունների «գիրկ», ապա.

1. Գաճաճ կայսրությունները կփորձեն էթնիկական զտում անցկացնել և վերացնել ազատագրվող ժողովուրդների ինքնիշխանության ամեն մի հիմք, որը կհանգեցնի, ի վերջո, ցեղասպանության, կամ «հումանիտար աղետի» կանխման կամար անհրաժեշտ կլինի կիրառել «հումանիտար ինտերվենցիա» (օրինակ, 2008 թվականի վրացական բլիցկրիգն ու ռուսական «գործողությունները»):

2. Դա կհանգեցնի, ի վերջո, Թուրքիայի դերի մեծացման Հարավային Կովկասում և Ռուսաստանի վերջնական արտամղման տարածաշրջանից. արևմտյան քաղաքակրթությունը կստանա ջախջախիչ և անուղղելի հարված՝ եվրոպական հարավ-արևելքում: Ռուսաստանի հերթական վերադարձ, թեկուզև իրեն ապավինած ժողովուրդների հաշվին, 1920-1921 թվականների օրինակով, այլևս չի լինի: Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) պայթյունի, ձուլման և ցեղասպանության թյուրքական պրակտիկան կգրանցի աննախադեպ հաջողություններ:

Այս տարրապատկերից (սցենար) խուսափելու համար անհրաժեշտ է.

1. Համակերպվել և ընդունել Հարավային Կովկասում ստեղծված նոր, սակայն բնական երկրաքաղաքական իրողությունները:

2. Ճանաչել «ինքնահռչակ», սակայն փաստացիորեն (դե ֆակտո) գոյություն ունեցող պետությունների՝ Արցախի, Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունները. նույն կարգավիճակը նախատեսել Աջարիայի համար:

3. Վերականգնել Նախիջևանի խնամակալության ինքնիշխանությունը. հինավուրց հայկական այս բիբլիական նահանգը, «Հայկական մարզի» այս գավառը խորհրդային առաջին տարիներին վերածվեց օսմանյան և ադրբեջանական թուրքերին իրար կամրջող համաթուրանական օղակի, որի նկատմամբ ծընվող Ադրբեջանի թյուրքական պետության հավակնությունը հնչեց Բաթումի կոնֆերանսում, 1918 թվականի մայիսի 20-ին, երբ Մահմեդական ազգային խորհրդի անդամ Ուսուբեկովը պահանջեց Նախիջևանը հանձնել Ադրբեջանին «Թուրքիայի հետ մշտական անմիջական կապ հաստատելու համար» (Аветисян Г., Брест-Литовск: как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум. Ер., 1994, էջ 116): Այնուհետև, թուրքական պետության ռազմա-քաղաքական ավանդույթին բնորոշ հետևողականությամբ (Ալեքսանդրապոլի դաշնագիր, հոդված 2, Մոսկվայի դաշնագիր, հոդված 3, Կարսի դաշնագիր, հոդված 5) Հայաստանի Հանրապետության անկապտելի մասը կազմող Նախիջևանի շրջանը վերածվեց թյուրքական Ադրբեջանի *խնամակալության (պրոտեկտորատի)*, թյուրքականության երկվորյակի՝ Ռուսաստանի բոլշևիկների գործուն օժանդակությամբ: [Տե՛ս Մոսկվայի 1921 թվականի մարտի 16-ի դաշնագիրը, հոդված 3.- «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը... կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակա-

լության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության», Կարսի 1921 թվականի հոկտեմբերի 13-ի դաշնագիրը, հոդված 5.- «Թուրքիայի կառավարությունը և Խորհրդային Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունները համաձայն են, որ... Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»]: Խորհրդային տարիները անդրենածին ժողովրդից մաքրագործված *խնամակալությունը* դարձրին Ադրբեջանի մաս, խախտելով Մոսկվայի և Կարսի տխրահռչակ պայմանագրերի հրամայական (իմպերատիվ) պահանջը:

Ադրբեջանն այսօր, ըստ էության, իրեն հռչակելով *ունիտար* (միատարր) պետություն, լուծված է դիտում իր տնօրինությանը հանձնված խնամակալության կարգավիճակի հարցը, որն իր մասը չէ և իր մասը չի էլ կարող լինել: Ադրբեջանին պետք է պարտադրել միջազգային օրենսդրության պահանջները:

4. Գաճաճ կայսրություններում իրենց ազգային տարածքներում հավաքությամբ (ком - пакт) ապրող հայերի, լեզգիների, թալիշների (և ուրիշների) արտամղումը կամ մշակութային ձուլումը կանխելու, տարածաշրջանի մշակութային բազմազանությունը պահպանելու հրամայականով անհրաժեշտ է նման ժողովուրդներին տրամադրել *մշակութային ինքնավարություն*: Այստեղ օգտակար կարող է լինել ժամանակին ավստրոմարքսիստ Օտտո Բաուերի կողմից առաջարկված մշակութային զարգացման «անտարածական սկզբունքի» կիրառումը, երբ կյանքի են կոչվում այնպիսի կառուցվածքներ, «որոնք կարող են երաշխավորել տարբեր ազգային մշակույթների ինքնավարությունը առանց նոր տարածքային սահմանների ստեղծման» (Տե՛ս Этнические и региональные конфликты в Евразии. Кн. 3. Международный опыт разрешения этнических конфкликтов. Общ. ред. Б. Коппитерс, Э. Ремакль, А. Зверев. М., 1997, էջ 13): [Ի դեպ, մշակութային ինքնավարության գաղափարով ժամանակին վարակվել էին վրաց ինտելեկտուալները, հատկապես մենշևիկները]:

Թուրքական հեծելազորը Կովկասում,
Առաջին աշխարհամարտի օրերին

Այսպիսով, կբացվի ճանապարհը դեպի անվտանգություն, կայունություն, իրական համարկում (ինտեգրացիա) և տարածաշրջանի բարգավաճում՝ Այսրկովկասում:

Այսպիսով, *Հարավային Կովկասի «միացյալ նահանգները»* կդառնան *Եվրոպայի «միացյալ նահանգների»* վերարտադրությունը, *«Հարավկովկասյան միությունը»՝ «Եվրոպական միության»* երկվորյակը:

Այս պարագայում է, որ պատմության աղբանոց կնետվեն խորհրդային իրականության ծնունդ գաճաճ կայսրությունները ևս, թյուրքականության ռազմաքաղաքական մարդակեր մշակույթի ավանդույթը: Չէ՞ որ այսօր որևէ մեկը չի մտածում արտամղել, ձուլել, կլանել «փոքրիկ» Լիխտենշտայնի իշխանապետությունը, Մոնակոյի իշխանապետությունը և, վերջապես, Սան-Մարինոյի Հանրապետությունը:

Այս դեպքում է, որ Հարավային Կովկասը կկարողանա որդեգրել Եվրոպական կառուցվածքներն ու Եվրոպական արժեքները:

Բացառիկ լուսանկար՝
Կարսի հայաթափումից,
1920 թ. հոկտ. 30
աղբյուր՝ wikipedia

Զինվորականության բարոյա-հոգևոր որոշ հիմնախնդիրների շուրջ.

դիտարկում հայ իրականությունից

Կարեն Վերանյան

Զինվորականություն-հասարակություն փոխազդեցության հիմքերը

Հայության շրջանում հասարակություն-զինվորականություն անքակտելի փոխհարաբերությունները խորապես պայմանավորված են հայ ժողովրդի ազգային խառնվածքով ու անցած պատմական ուղով: Հասարակություն-պաշտպանական համակարգ փոխազդեցությունը բավական թափանցիկ ու զգայուն է հայկական իրականությունում մի քանի հիմնական պատճառներից ելնելով՝

1. Հայ ազգն իր գոյության ողջ ընթացքում մշտապես գոյակցել է հաճախակի դարձած պատերազմների ու ռազմական սպառնալիքների առկայությամբ, ապրել ցեղասպանություն:

2. 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության պատմական հիշողությունն այսօր առանցքային նշանակություն ունի հայության անվտանգության պաշտպանության հարցում, ինչն աստիճանական խո-



բացման միտումներ է արձանագրում՝ կապված հայ-թուրքական հարաբերություններում տեղ գտած վերջին զարգացումներով և հատկապես Թուրքիայի հանրապետության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության ճանաչման ժխտողականության քաղաքականությամբ:

3. Պատմության ընթացքում մշտական ռազմական սպառնալիքներից հայ ժողովուրդն իր և հայկական պետականության անվտանգության ապահովման հարցում մշտապես ապավինել է հայ զինվորականի (լինի շարքային թե բարձրաստիճան սպա) և հայ հոգևորականի պաշտպանությանը, որոնք երկուսն էլ ներկայացել են որպես հայ ազգի ու հայոց պետականության անվտանգության պաշտպանության երաշխիքները:

4. Հայ իրականությունում թարմ են մնացել 20-րդ դարավերջին ադրբեջանցիների կողմից հայության դեմ իրականացված ջարդերն ու դաժան սպանություններով ուղեկցված բռնի տեղահանումները:

5. Հայ ազգի հերթական փառահեղ հաղթանակը՝ արցախյան ազգային-ազատագրական հերոսամարտը, որն անշուշտ դասվում է հայ ժողովրդի պատմության և հայոց պետականության պատմական խոշոր հաղթանակների շարքին:

6. Վերջին տասնամյակներում հայության շրջանում տեղի է ունենում հայ զինվորականի՝ որպես հայոց պետականության և հայ ազգի անվտանգության ապահովման երաշխավորողի պատմական հիշողության վերականգնման կարևոր գործընթաց՝ պայմանավորված Արցախյան հերոսամարտով:

7. Հայության պատմությունում Արցախյան հերոսամարտը ներկայացավ նաև կարևոր պատմական-անցումային փուլ՝ հայոց պատմության ընթացքում զավթիչների ու թշնամիների հաճախակի հարձակումների ու պատերազմների ներքո հայ ժողովրդի՝ զոհից հաղթանակած ազգի կերպարանափոխման գործընթացում:

8. Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ռազմաքաղաքական համագործակցությունը և ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում պաշտոնական Անկարայի բացահայտ կողմնակալ դիրքորոշումը մշտա-

կան ահազանգ ու սպառնալիք են ներկայանում ՀՀ, ԼՂՀ և համայն հայության անվտանգության պաշտպանությանը:

9. Թուրքիայում և Ադրբեջանում պետական-քաղաքական, հասարակական գրեթե բոլոր ոլորտներում ոչ միայն շարունակվում, այլև ավանդույթի է վերածվել հակահայկականության քարոզման ու ներարկման բարդույթը, ինչի արդյունքում ՀՀ-ին հարակից պետություններում ձևավորվում են արհեստականորեն ձևավորված ռազմականացված կարծրատիպերով հասարակություններ:

Խնդիրներ և ռեսուրսներ

Պատմության տարբեր ժամանակահատվածներում առկախված սպառնալիքների ու իրական թշնամանքի մթնոլորտի արդյունքում հայ ժողովուրդն իր գոյապահպանության ու անվտանգության պաշտպանության հարցում մշտապես ապավինել է հայոց զինվորականությանը, նրա մարտական ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությանը, փառաբանել նրա հերոսականությունը: Հայության շրջանում հայ զինվորականի մեծարումը նաև պայմանավորված է զինվորականության հասարակայնացման գործընթացի հետ, այն է՝ հայության պատմության ողջ ընթացքում զինվորականության շարքերը համալրում էին թե՛ ռազմական ոլորտի ներկայացուցիչները և թե՛ մտավորականներն ու գյուղացիները:

Խորհրդային կարգերի փլուզմամբ և Արցախյան հերոսամարտի փայլուն հաղթանակով նոր կազմավորված հայոց բանակում սկսեց արագ տեմպերով ընթանալ սոցիալականացման բարդ գործընթաց, որն ուներ ինչպես իր տրամաբանական, այնպես էլ արհեստածին նախադրյալները: Խնդիրը նրանում է, որ հատկապես վերջին տասնամյակում հայ զինվորականության շրջանում ընթացող սոցիալականացման միտումներն ուղեկցվեցին լուրջ բարոյական-արժեքաբանական մոտիվներով, ինչը թերևս խորապես պետք է կապակցել ՀՀ անկախացումից հետո երկրում և ողջ հայության շրջանում տիրող ծանր սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական վիճակի հետ: Սակայն, մյուս կողմից, չպետք է հայ զինվորականության խնդիրները պայմանավորել զուտ երկրի սոցիալ-հասարակական գործընթացներով, այլ նաև փնտրել այլ շարժառիթներ, ինչպես, օրինակ՝ ազգային ինքնության ու խառնվածքի հիմնահարցերը: Արդյունքում հայության և հատկապես հայ զինվորականության շրջանում ավանդություն դարձած «եղբայրական-ոչ արյունակցական» հարաբերությունները, որոնք է՛լ ավելի ամրապնդվեցին Արցախյան հերոսամարտի ողջ ընթացքում, ենթարկվեցին աստիճանական խեղափոխումների: Սոցիալականացման այս գործընթացն իր խորը բացասական ազդեցությունն ու հետևանքները չէր կարող չթողնել առաջին հերթին հասարակության շրջանում հայ զինվորի փառաբանման ավանդույթների վրա: Մյուս կողմից, այդ բացասական միտումները զգալիորեն նպաստեցին նաև հայ զինվորականության շրջանում միջանձնային հարաբերությունների (զինվոր-զինվոր, զինվոր-սպա) վատթարացմանը: Ավելին, զինվորական կյանքում ու այնտեղ ձևավորված մարդկային հարաբերություններում տեղի է ունենում օտարման խորը արժեքաբանական մի գործընթաց, որն իրապես ու-

ՀՀ բանակ (1918-20 թթ.)



ՀՀ բանակ, Էջմիածին

նի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին՝ «հրամցված» շարժառիթներ:

Անհրաժեշտ ենք համարում նաև հիշատակել, որ այս ամենի հետ մեկտեղ հայ իրականությունում ենթագիտակցաբար, իսկ այնուհետ՝ գիտակցաբար որոշակիորեն ձևախեղման է ենթարկվել նաև հայ զինվորականության առաքելության ու նպատակի հիմնահարցը, որը բարձր պետական ու համամարդկային արժեքաբանական ընկալումներից տեղափոխվել է խիստ սոցիալական-կենցաղային մակարդակ: Այն է՝ հայ իրականությունում հայոց պետականության ու ողջ հայության անվտանգության պաշտպանության գիտակցումը, որը և յուրաքանչյուր հայիս, առավել ևս հայ զինվորականի բարձրագույն առաքելությունն է, դարձել է բավական աղոտ: Նկատենք նաև, որ պատմական տարբեր դարաշրջաններում հայության և հայոց պետականության պաշտպանության գործում հայ զինվորականության շրջանում գործող և ավանդույթ դարձած համամարդկային արժեքները, որոնց պահպանումը բխում է հայության ազգային կերտվածքից ու ինքնությունից, նույնպես հետևանք են անառողջ սոցիալականացման ու արժեքաբանական գործընթացների: Վերը նշված միտումներից առանձնացնենք բավական վառ օրինակներից մեկը. հայ իրականության որոշ շրջաններում փորձ է արվում հայ զինվորականության շրջանում տեղի ունեցող գործընթացներն ու իրադարձությունները պայմանավորել ու համադրել գլոբալ և հատկապես հետխորհրդային սոցիալականացման այսպես ասած «տրամաբանական, բնականոն» միտումներով՝ պարզաբանելով դրանք հարևան երկրներում նմանատիպ միտումներով ու իրադարձություններով ու առկա վիճակագրությամբ: Պետք է նշել, որ այդ գործելաոճով մենք ինքներս նախ փորձ ենք կատարում հակասելու հայության պատմական հոգևոր-բարոյական ժառանգությանն ու հայ ազգային ինքնության առանձնահատկություններին, և երկրորդ՝ նպաստում հասարակությունում և զինվորականության շրջանում բարոյահոգևոր արժեքների խեղաթյուրմանը:

Առաջարկություններ

Հայ զինվորականության շրջանում բարոյա-հոգևոր ավանդական արժեքների պահպանման ու խորացման նպատակներով նպատակահարմար ենք համարում ներկայացնել հետևյալ մի շարք առաջարկությունները՝

ա) հայության և հայ զինվորականության շրջանում հայ ազգի ու հայոց պետականության անվտանգության պաշտպանության «բարձրագույն առաքելության» գիտակցման ընկալման բարձրացում,

բ) յուրաքանչյուր զինվորականի մոտ, լինի շարքային զինվոր թե սպա, հայության և հայոց պետականության պաշտպանության խնդրի՝ որպես յուրաքանչյուր զինվորականի բարձրագույն առաքելության արժեքաբանական, բարոյահոգևոր ավանդույթների վերականգնում,

գ) հայ զինվորականության և հայության շրջանում զինծառայության հարցում նպատակի ձևակերպման արժեքային հիմքերի կաղապարում,

դ) հայ զինվորականության մեջ համամարդկային արժեքների՝ հայ ազգային ինքնությանը հարիր ավանդույթների ու պատմական հիշողության վերականգնում,

ե) զինվորականության շրջանում մարդկային, միջանձնային հարաբերությունների՝ խորհրդայնացված ժառանգության բացասական հետևանքների վերացում և հայ ազգային ավանդույթների վերականգնում,

զ) հայ զինվորականության միջանձնային հարաբերությունում «կոլեկտիվ» (հավաքական) զինծառայության ավանդույթների պատմական հիշողության վերականգնում (օր.՝ Արցախյան հերոսամարտը). «հավաքական» զինծառայության առաքելության արդյունավետ կիրառման օրինակներ կարող են ծառայել ամերիկյան և իսրայելական զինված ուժերը,

է) զինվորականության միջանձնային հարաբերություններում կարող է արդյունավետորեն կիրառվել նաև երկու հակասական խառնվածքներով ընկերների «ֆրանսիական մոդելը», ըստ որի վերջիններս իրենց բնավորությամբ խիստ հակասելով հանդերձ միմյանց՝ ոչ միայն չեն լքում միմյանց, այլև ներկայանում են որպես հավատարիմ ընկերներ. ֆրանսիական մոդելը, որը հայտնի է ֆրանսիական շատ ֆիլմերից (օրինակ՝ «Ձախողակները»), երկու անհատների հակասական կերպարների մտերմությամբ շեշտում է նրանց ընկերությունում միմյանց փոխլրացման հարցի անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից՝ անհատի նկատմամբ հանդուրժողականության և բարձրագույն առաքելության իրականացման առջև ունեցած հավասար իրավունքների ու պարտականությունների կարևոր սկզբունքները,

ը) հայ զինվորականությունում սոցիալականացման գործընթացներում արժեքաբանական հիմնահարցերի առաջմղում ու կարևորում,

թ) հայ զինվորականության և հայության շրջանում զինվորականի (շարքային թե սպա) ստանձնած «բարձրագույն առաքելության» գիտակցման արժևորում,

ժ) հայ զինվորականության և հայության շրջանում զինվորականի (շարքային թե սպա) արժևորում,

ժա) յուրաքանչյուր հայ զինվորական պետք է գիտակցի և զգա հայության անվտանգության պաշտպանության՝ իր առջև դրված «բարձրագույն առաքելության» արժեքը,

ժբ) յուրաքանչյուր հայ զինվորական պետք է զգա իր արժևորումը թե՛ զինվորականությունում և թե՛ հասարակությունում (զինվորականության բարոյահոգևոր արժեքների ուղղությամբ միջազգային և առաջին հերթին իսրայելական փորձից օրինակներ). իսրայելական բանակի ղեկավարությունը յուրաքանչյուր գերեվարված հրեա զինվորականի դիմաց պատրաստ է իսրայելական բանտերից ազատ արձակել 500-1000 և նույնիսկ ավելի արաբ գրոհայինների ու ռազմագերիների՝ հրեա ռազմագերուն կամ նրա մարմնի մասերը հայրենիք վերադարձնելու նպատակով:

Հետզրույց

Հայ զինվորականի, լինի շարքային զինծառայող թե բարձրաստիճան սպա, բարեկեցությունն ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածության ապահովման հիմնահարցը ոչ միայն զինվորականության, այլև առաջին հերթին յուրաքանչյուր հայիս պարտականությունն է՝ ի շահ ՀՀ, ԼՂՀ և համայն հայության անվտանգության պաշտպանության: Զարգացած և պրոֆեսիոնալ ԶՈՒ ունեցող երկրներում գործում են բազմաթիվ բարեգործական ու հասարակական կազմակերպություններ ու հիմնադրամներ, որոնց առաքելությունը կենտրոնացած է զինվորականության (հատկապես շարքային զինվորների) սոցիալական-կենցաղային, ֆինանսական ու բարոյահոգևոր աջակցման հարցերում: Հայ իրականության հետ համադրելի օրինակներից մեկը իսրայելական բանակն է, որի զինվորականները տարբեր տեսակի աջակցություն են ստանում ինչպես Իսրայել պետության, այնպես էլ նրա սահմաններից դուրս գործող հրեության հասարակական ու բարեգործական կազմակերպություններից՝ ընդհուպ մինչև մատակարարումները սննդամթերքով (համբուրգերների ու ըմպելիքների հիմնադրամներ և այլն): Ավելին, Իսրայելում և հրեությունում առհասարակ ավանդույթ են դարձել երեխաների, պատանիների և զինվորականության միջև նամակագրական հաղորդակցությունն ու նրանց հաճախակի դարձած այցելությունները տարբեր զորամասեր:

ՊԱՐԱՊ ՉՐՈՒՅՑ

Ֆելիքս ՄԵԼՈՅԱՆ
Գրականագետ

Ոչ հաղթող էր լինում, ոչ պարտվող, գրականությունն էլ, Ասպված գիտե, թե ինչ՝ շահում էր: Սա խորհրդային գաղափարական կառույցի՝ Գրողների միության համագումարի ծագումնաբանական յուրահատկությունն է, որ այս անգամ չգործեց: Պարտվեցին բոլորը՝ և՛ հաղթողները, և՛ պարտվողները, գրականությունն էլ կորցրեց անտի պատրանքի վերջին ծվենը՝ Ասպված գիտե, թե ինչ, որ շահելու էր: Մինչդեռ երեսանց պակաս բան չկար՝ հին ջուրն էր ու հին ջրաղացը. ուշ երեկոյան իրարից բաժանված գրողներն առավոտյան հին օրերի հանգույն Գրողների տան միջանցքներում ծանրապատիվ ու խոհական ողջագուրվեցին,- «Էս ո՞նց են թռչում տարիները»,- կանոնավոր հերթով ստացան գնդիկածայր գրիչ ու զոլավոր բլոկնոտ պարունակությամբ իրենց պայուսակները, իսկ երբ դահլիճում էին և նկարեն ժպիտով այլևս նրստած տեղից, հեռակա էին աջուձախ ողջագուրվում, համագումարի ամբիոնը խոսեց: Ոգևորությունը մի քիչ պակաս էր, բայց դարձյալ ճարճատեց. է՛լ աշխարհը բացատրելուց դադրած իմաստասերի բարբառ ու կեցվածք, է՛լ խոտոր ճամփա բռնած անառակ որդու գլխին ավետարան, է՛լ ջանջիգյար միաբանության հորդոր,- ամեն ինչ տեղը տեղին էր, միայն թե հին օրերը եր բերող չեղավ, որ Բեթհովենի Հերոսական 3-րդի հնչյունների ներքո հայազգի գրողի Թուր Կեծակին Մսրա Մելիք կիսեր: Հաղթելու անհողդողդ վստահությամբ ֆալանգներով եկան, մեկիկ-մեկիկ մոլոր ցրվեցին տները:

Ե. Չարենց

Մարդկանցողների մեջ գրողներ էլ կային, բայց պայքարը գրական դաշտում չէր, և իրենք իրենց խաղը չէին խաղում: Ցնորական ոգորում էր պարտիևակ ելքով. հաղթեցին բոլորը, պարտվեցին բոլորը, հաղթություն էլ, պարտություն էլ ընդդեմ գրականության էր:

Այնուամենայնիվ ի՞նչ կլինի, եթե մի սև, մի դժնի, մի սրտաճմլիկ օր Գրողների միություն կազմակերպությունը չլինի՝ մուխը մարի, քարուքանդ կազմալուծվի կամ էլ, ասենք, Տերևընդառաջի ազիզ օրով հեթանոսների ուրվականները խարույկ վառեն ու ՀԳՄ նախագահի աթոռը իրո ճարակ դարձնեն: Գրողները, իհարկե, նաև ապագայի գուշակներ են և այդ տեսլականն ունեն. կոռապաշտների բարբարոսությունից դեռ ուշքի չեկած՝ ժողովարար մտավորականների ոսոխ օլիգարխը կգավթի հայոց դպրության գահանիստը՝ Գրողների տունը, երկնակամարը խանձող խարույկի բոցերը դեռ չմարած՝ մեր պատվական դղյակը կգրանցի իր գույքամատյանում: Եվ այս մռայլ գուշակությունը, որ աներկբա է հանց իրողություն և պակաս սահմռկեցուցիչ չէ, քան Պիկասոյի «Գերնիկան», զորեղ կռվան է մեր խառնակ օրերի մեջ խորհրդային հույժ գաղտափարական կառույցի ապահով գոյատևության:

Բայց տրնդեզ-խարույկից ու հայ գրի միջնաբերդի անկումից բացի մեր մարգարեությունը ուրիշ ոչինչ չի կանխագուշակում, վկայող չկա՝ էլ ինչ փորձանքի ենք գալու, մեր գրականությունը էլ ինչ ծանր կորուստներ է կրելու: Իսկ գուցե չի՞ կորցնելու, գուցե շահելու է: Ինչ է՝ այդ աչքածակ գործարարը փառասիրության տենդի մեջ մերոյգրական ավարաներ է զինվորագրելու ու իրեն ՀԳՄ նախագա՞հ հռչակի, նոր տեխնոլոգիաներ է մշակելու և մեր գրամոլներից ավելի արդյունավե՞տ պայքարի հայերենի ու հայ գրականության դեմ: Ի՞նչ է անելու: Գոնե մի քանի տասնյակ խնամի-բարեկամ չի՞ բանեցնելու ու դրանց բոլոր քչից-շատից մի բան դնի (թող փողկապ կապեն, ծամոն ծամեն և օֆիսի դռնից ներսուդուրս անեն): Եվ դեռ ենթադրելի ու իրական օգուտներն էլ իրենց հերթին. նա, ով կոչված չէ գրելու, որ զգուշանա գրչից ու գրասեղանից, պակա՞ս չեռքբերում է, դրանից օգուտ չկա՞ ընթերցողի, գրականության, հենց իր՝ խուրոր ճամփա բռնած մոլորյալի համար: Անտաղանդ գրողը որ չգրի, ոչ մի անտաղանդ էլ չի: Մի գործի մեջ ծվարած՝ իր տաղանդն իրեն է սպասում, թող գնա գտնի: Գտավ՝ լավ, չգտավ՝ մարդ է, էլի, գլուխը կախ կաշխատի, տուն կպահի:

Գաբրիել հրեշտակապետը, փառք Աստծո, առայժմ անշահախնդիր անկաշառ է, մեր օլիգարխը նույնիսկ հեպը լեզու չի գտել: Այստեղ հարամություն չկա, իմ ու քո դռներն էլ է բակում, նրա դարպասն էլ: Տանում է բոլորին և ամեն ինչ: (Սուտ է՝ Քեոփսը հավերժության անվանումներից մեկը չէ, նա էլ է վախենում ժամանակից): Գնացողի ետևից էլ, կարգ է, վատ չեն խոսում, միայն թե ԽՍՀՄ փլուզումից հետո (Քեոփսից պակաս բուրգ չէր)

նրա գաղափարական կառույցը ոչ հանգուցյալ է, ոչ էլ հարցնող կա, թե Չարենցին ու Բակունցին որ մեռցնում էին, ինքը ի՞նչ բանի էր... Լավ, թող որ այս հարցը չպիտի տրվեր, սա դեմագոգիա է՝ այստեղ հանցակազմ չկա, ոճրագործն իր տերն էր՝ ԽՍՀՄ-ը, որին բաղել ու գերեզմանին չանչ է արել: Թող որ ինքն այլևս երեկվանը չէ: Բայց որ ՀԳՄ 75-ամյակն էր նշվում, հոբելյարն այլևս մարազմատի՞կ էր, իր անցած ճամփան մտահա՞ն էր արել, կազմակերպության՝ խորհրդային ավելի քան կեսդարյա ո՞ր ծառայությունների պատվին էր տոնակատարությունը:

75-ը, իհարկե, պատկառելի տարիք է, բայց ՀԳՄ կուսակից-անդամի սրտովը չէ, որ գրողների ներկայիս կոլեկտիվը ծնունդով «բոլշևիկյան կայսրությունից» է. իրենց միջի ուսյալը հարևանցիորեն, կողքանց, անուղղակի, մի տեսակ ակամա մտաբերում է Թումանյանի «Վերնատունը»՝ որպես թե դա է անցյալի մացառների մեջ թաղված ՀԳՄ ակունքը, թե ահա «վերնական» դյուցազունների զարմից է սերում գրողների այսօրվա «հզոր բանակը», որ աճող օրգանիզմ է և որի համար անշնակազմի 350-ը սահման չէ: Եվ այս աշքակապությունը պպավորություն թողնում է, քանզի հիշողն ով է, թե 1899-ից Թիֆլիսի Բեհբության 50 տանը հավաքված Թումանյան, Աղայան, Շանթ, Աղբալյան, Իսահակյան և Դեմիրճյան խումբը 6-7 տարվա ընթացքում թեկուզ մեկով չհամալրվեց, թե այդ տանը «վերնականներն» ու նրանց հյուրերը նաև ապրում էին, ուշ գիշերներին «գինին ու խորոված ծնպակաս» սեղանի շուրջը Դեմիրճյանն իր ջութակն էր նվագում, Աղայանը «Քյորօղլին» էր երգում, իսկ երբ Սայաթ-Նովայի երգերի սիրահար Նիկոլ Աղբալյանը Պետերբուրգում ուսանում էր, Թումանյանն իր գորովը առ «Վերնատան» միակ բնակիչը ծրարում ու հասցեագրում էր. «С. Петербург, Николаю, но не Второму, а самому последнему»...

«Վերնատունը» գրողների ընկերախումբ էր, կոլեկտիվ չէր, վեցյակի հավաքներից ոչ մեկը ժողով չդարձավ, որ իր սահմանադրական օրակարգը պահ տար պատմությանը, քանքարավորներն իրենց ճակատները չկնճռոտեցին՝ հայ գրականության ընթացքն ուղղորդելու: Դա գրական շարժում չէր և գեղագիտական նոր ուղղություն չնշանավորեց. «Ամուշը»՝ Թումանյան, «Հին աստվածները»՝ Շանթ, յուրաքանչյուրն իր աստվածության, իր հոգու ու մտքի իմաստության հավատավոր՝ տարասերմ ու անընդունելական: Բայց



Ն. Աղբալյան

սիրո մեջ էին ապրում, սիրահարություն կար մեջները:

Ընկերներիս սուփրին գինի ու հաց ըլիմ մինչև էգուց...

Այդպես: Մեր, ուրեմն, խորհրդային տարիներին էլ կար, գինի ու հաց ընկերներիդ սուփրին կարող էիր լինել, եթե սերդ զորում էր: Չարենցինը զորում էր: Իսկ սպանեցին, որովհետև բանաստեղծ էր. միշտ էլ դրա համար սպանում են, բանաստեղծ լինելը դեմ է համակեցության կանոններին: Մարդը իրավունքներով է ծնվում, մարդու իրավունքների պաշտպանը

հրեն երկնքում է, իսկ երկրի երեսին թուրքվանք պաշտպանում են կոլեկտիվի անդամի, նույնն է թե՝ կոլեկտիվի իրավունքը, որին հակա է բանաստեղծը: Անհատները, այնուամենայնիվ, հանրագումարի չեն գալիս, կոլեկտիվ ջանքին առընթեր չեն, ոչ համատեղ աշխատանքի արդյունք են գոյացնում և ոչ էլ դրա փայատերերն են: Կուզես գնա հակառակ կողմից նայիր՝ Չարենցյան պոեզիայի փառքը իր շվաքի տակ էլ տեղ չի տալիս ՀԳՄ-ին: Եվ սա պատահականը չէ այն անուրանալի իրողության, որ 1930-ականների ՀԳՄ-ի աշխատանքի հատկանշական ցուցանիշը Չարենցի և Բակունցի դատապարտումն ու սպանությունն է: Սրա էլ թող որ ոչ նույնական դրսևորումը, ընդամենը պրամաբանական շարունակությունն է մերօրյա այն անարյուն գործընթացը, որ եթե կոլեկտիվը ստեղծագործողների է,- Գրողների միություն, Նկարիչների միություն...- ստեղծագործող է տիրաժավորում՝ համարյա գրող, համարյա նկարիչ... Տասնյակներով, և ոչ մի շեղում: Էստամպ սարքը որ կա՝ այդպես: Այս տասնյակների հորինած գիրք ու կտավ հարյուրներն էլ արվեստական են, բանալ, ինքնաբավ ու ինքնահիմա: Ողորկ ու անփուչ: Չեն դարմանում, որ կողմնակի ազդեցություններից զգուշանաս: Եվ կոլեկտիվը, հասկանալի է, կանխարգելում և բանադրում է անոմալիան. Չարենց ու Մաթևոսյան, Սարյան ու Մինաս՝ չէ, սրանք կոլեկտիվի գենի կրողները չեն, սրանց ծնողն ու ստնտուն ինքը չէ: Մանավանդ որ՝ կուզես գրականագետ եղիր, կուզես՝ արվեստաբան, այս զատորոշվածների ծագումի քո փնտրտուքը ինչ ճամփով էլ տանես, կբերի դեմ կանի հայ ժողովրդին ու հայերենի աշխարհընկալմանը: Կբերի ելման կետ, ի վերջո՝ «Հայ բանաստեղծ Եղիշե Չարենց», ի վերջո՝ «Հայ նկարիչ Մարտիրոս Սարյան»... դրանից անդին խավարչտին մութ է:

Չարենցյան պոեզիայի բյուրեղացումը մեկուսացման ընթացք էր՝ և՛ ինքն էր դուրս մղվում կոլեկտիվից, և՛ կոլեկտիվն էր իրեն հեռացնում: Խորթությունը չպարտակվեց: Թշնամանքի չվերածվեր էլ՝ գրականության բարեշրջությունը ընդհանրական շահ չէ ոչ կոլեկտիվի և ոչ էլ անհատի համար: Ճիշտ է, ծիսական նշանաբանը դա է, բայց այդ սրբապատկերի առաջ կողմերից և ոչ մեկը մոմ չի վառում ու մոմի պես չի նվաղում: Եթե, ի վերջո, անհատ գրողները շղթա կազմած գրականություն են ներկայացնում, վկայություն չէ, թե սպիտակ թուղթը ընդհանուր գրականության ճակատագրի հարց է դնում գրողի առաջ, թե գրիչ շարժողը հենց այդ հոգսն է: Եվ ոչ էլ գրականությունը գրողների էսպրաֆեսիոն է կամ ազգային տան պատերի ներսում հնչող փոխկանչերի հյուսկեն սիմֆոնիա. Չարենցը Թումանյանի ֆեռքից չառավ փոխանցիկը, «ընկերներիս սուփրին գինի...»-ն էլ ավելի շուտ ետենիկյան, քան սայաթնովական հոգեվիճակի արտացանք է կամ դրսևորում:

Եթե ԽՍՀՄ-ից ստեղծագործական միությունների կառույցն անիսաթար ժառանգեցինք ու գլխի չընկանք, թե ֆենը հեստը կբերի իր խորհրդային բովանդակությունը, հիմա՞ ինչու ենք չտեսնելու տալիս, որ կառույցն ինքը բովանդակություն է պարտադրում և շարունակում է մնալ իր հին ծառայությանը: Առաջ ինչպես էր. Սահյանն ու Գրաշին հավասա՜ր-հավասար, և ընդհանրապես բանաստեղծն էլ էր ընթերցող, ընթերցողն էլ էր բանաստեղծ՝ այսինքն նա, ով գիրք չէր կարդում, բայց ընթերցող էր: «Կոմունիզմը կգա, համայնական դաշտերի վրայով կգա նա...»: Չեկավ՝ լռվեց-մնաց: Ինքն այնտեղ մնաց, մենք հասանք այստեղ ու դեռ սպասո՞ւմ ենք: ՀԳՄ կառույցը պահել ենք, որ այդ ոչուփուչ կոմունիզմը համայնական գրականության վրայո՞վ գա:

Ֆրանսիացին ասում է՝ «Ինչպիսին ծովն է, այնպիսին էլ նավն է»: Մեր ուզածն ի՞նչ է՝ ծո՞վը հարմարեցնել նավին: Որ այս պղտոր ջրերը զուլալվեցին, իշխանություն ու ժողովուրդ՝ դարձանք աչքը կուշտ ու կարգապահ քաղաքացիական հասարակություն, մեր լաստը նավարկելո՞ւ է, ստեղծագործական միությունները տաղանդի դարբնո՞ց են դառնալու: Թե՞ արդեն ե'ն, և պիտի համակերպվենք, որ մեր պոեզիան, օրինակ, Արտեմ Հարությունյան դրոշակակրով, համաշխարհային մակարդակի է: Իսկ եթե հաստակող մեկը իր անընմբռնողությունը դեմ տա ու հարցնի՝ ի՞նչ ասել է համաշխարհային մակարդակ: Պատասխան ունե՞նք, թե էլի սնոտի-խորհրդավոր բամի ենք անելու՝ բոլորովին պարտադիր չէ, որ նախ բանաստեղծ լինես, նոր միայն համաշխարհային հարգի...

Կյանքը գետնաքարշ գալարվում է, իսկ հեռուստաէկրանը լի է աստղերով, դարդուցավի համաճարակ է, իսկ այդ ժանտախտը մոտ չի գալիս խնջույքի սեղաններին: Այդպես չի լինում, թեկուզ մի բեդվին կգտնվի՞, որ ֆեռքը դնի ավազներին ու երդվի, թե ծովում օազիս է հանդիպել: Կյանքում մի անգամ, ասենք, նավարկել է և մանրիկ դարսերով ծովի մակերեսին քշքշան աղբյուրները մեջը զմրուխտ գորգ է տեսել, ափսոս ուղտը հեստը չի եղել, որ արածեցնի:

Չհավատաս՝ մեզանում կոռուպցիա չկա: ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ճապոնիայում կա, Նորվեգիայում և Շեքսպիրի իմաստասեր արքայազնի հայրենիքում՝ Դանիայում էլ առկա է, Հայաստանի հանրապետությունում՝ չէ, չկա: Քաղաքացիական հասարակության ափերը թող մեզ չվերագրեն, մենք քաղաքացիական հասարակություն չենք: Հայաստանում կոռուպցիան ափտ չէ, կենսակերպ է: Ո՞նցոնց՝ կոռուպցիայի դեմ պայքարն էլ մեզանում կոռուպցիայի արտահայտություն է. ո՞ւմ կաշառք չտանք՝ նրա՞ն, թե՞ քեզ, որ աչքերդ լայն բացես ու տեսնես, որ սա քո հայրենիքն է, և լկտի խորհուրդներ չտաս՝ «Եղիր աղքատ, բայց հպարտ»: Մինչև ե՞րբ, էլի ինչքա՞ն, այդ ցավը կրած կա՞ս: Սերգեյ Դովլաթովն ասում է՝ աղքատությունն էլ է բնատուր: Ինքը կախականջության ընտել չէ, քե'զ է հեգնում: Թե՞ քո դդյակն ու «Մերսեդեսն» էլ են բնատուր, փորձարարության համար պիտանի առնետ չես: Փորձիր, գուցե հաջողես: Եղիր հպարտ, վաղվա մեր էլիտան ես, մենք դրան չենք հակառակվելու: Քեզնով կհպարտանանք, կլինենք վսեմ...

Եթե իշխանությունը կոռումպացված է, իրավապահ մարմինները, դատարանը, հիվանդանոցը, դպրոցը,- մանկապարտեզն էլ, մանկամուրն էլ,- կոռումպացված են, եթե բոլորս այդ ցուպիկով ախտահարված ենք, այդ ինչպե՞ս է, որ եկեղեցին օազիս է: Որովհետև պետությունից անջա՞տ է: Չլինելու բան է, կեղծիք է՝ ոչ անջատ է և ոչ էլ օազիս: Կնունք, հարսանիք, հուղարկավորություն՝ եկեղեցու ապաստավորները կոռումպացվածներիս առաջին շարքերում են: Պողոս-Պետրոս եկեղեցին տերունական տուն էր, որ քանդեցին բոլշևիկները, Ամառային կինոթատրոնն էլ է տերունական տուն, որ ուզում են քանդել եկեղեցու ապաստավորները - բոլշևիզմը հետապնդո՞ւմ է մեզ, թե՞ առաջնորդում:

Խորհրդային արվեստագետի կենացը ծաղկեցնող համարյա թե ճշմարիտ մի խոսք կար. «Բոլոր կայսրությունները զինական են, Հայաստանը մշակույթի կայսրություն է»: Եվ հայրենասեր արվեստագետը տեղում փքվում, իրեն կայսր էր զգում: Դա, իհարկե, բուն ճշմարտությունը չէր, բայց հո բաժակի վրա չէիր ճշգրտելու, թե մշակույթի կայսրությունն էլ պիտի զինական լինի: Կարևորը, որ ճշմարտանման էր, ոգեշունչ և այն տարիների ար-

վեստրագետներին հաճո՝ մի քիչ հակահորհրդային: Եվ Աստված շատ չհամարեց ազատականներիս հավակնորությունը, փիրացանք նաև խորհրդային զանգվածեղ ու ամենազոր, իրավ կայսրական Մշակույթի նախարարությանը. պատերազմական ավար էր՝ սահմանն անցկացրինք, բերինք մեր օրերը ու ֆեռը կրակն ընկանք... Բանկետի այն օրվա խումհարի մեջ մենք մեզ հարց չտվինք՝ ինչների՞ս է այդ ինքնահմա պշրուհին, քաշալ գլխին փղոսկրե սա՞նրը որն է... Եվ հիմա եթե ՀՀ ողջ բյուջեն, քո փառահեղ դղյակն ու «Մերսեդեսը», մեր թուլաբաժին նպաստն ու թոշակը ի մի բերենք, էլի հագուրդ չենք տա այդ խաստուրիկ սիրամարգին: Փեսրահան էլ արինք, արդուզարդը ծախծխեցինք էլ,- ծախու բան դեռ մնացած կլինի՝ դա էլ կծախենք,- բայց մեկ է՝ կայսրական պարտեզների այդ հավը մեր հավաբնում ֆու չի ածում: Այն ժամանակ էլ ասող չեղավ, հիմա էլ չկա՝ ինչո՞ւ ֆեր պատկերին ու կեցությանը սազական աշխատանքային լծակ չունեք, վրա-վրա նախարար փոխելով հո չի...

Ճիշտ է, աշխատանքից ազատված նախարարներ մեզ պետք են, նախկին պաշտոնյան թթխմոր է, առանց որի մեր անգիրակից զանգվածից քաղաքացիական հասարակություն չի հունցվի: Բայց քոնը ուրիշ. մտքովդ չանցնի, թե ծնունդով իշխանավոր ես կամ իշխանության ընդդիմադիր: Փառահրությունը օֆիքդ բռնել, քաշել է խաղի մեջ: Երբ միլպետ կամ նախարար էին նշանակում, պիտի ասեիր, որ իրենց գործի հավատավորը չես: Հիմա էլ, երբ անբասիր ազգասեր ես, չպիտի ասես, թե պաշտոնանկությանդ բոթը հրոբկոպալի՝ հեռուստացույցից լսեցիր: Իսկ ինչ կա զարմանալու, պաշտոն տվողը հո չէր կանչելու ականջիդ շշնջար՝ սիրելիդ իմ քերթող, տեղ ես հասել, ինքնաթիռից իջիր... Այնպես որ՝ հարցը պաշտոն տվողի բարոյականությունը չէ, քոնն է:

Եթե յուրաքանչյուր տաղանդավոր տաղանդ է յուրովի, համատարած այս խոտանն անիուսափելի՞ է: Այսինքն թե՝ անտաղանդությունն էլ է՞ տաղանդի յուրահատկություն, տաղանդավոր գրողների ֆահոդված գրքերի ջրե՞րն են այսպես բարֆրացել ու խեղդում ընթերցողին: Եթե ոչ, եթե ասպարեզում անտաղանդներն են, իսկ անտաղանդությունն էլ անանց ու անխոտոր էություն է, ՀԳՄ բոլոր անդամների ու նրանց գրի նկատմամբ մեր անիսրրական վերաբերմունքը,- մեկը պարբերաբար չպիտի տպագրվի, իսկ մյուսը տարին տարվա վրա մնա գրքի զվարթ շնորհանդեսին կարոտ,- սոցիալական արդարության դրսե-վորո՞ւմ է, թե՞ հոգևոր արժեքների նկատմամբ հանցավորություն:

Կարծիքների տարբերությունը մի կողմ, ասենք ՀԳՄ անդամներից գրող են ոչ թե 10 կամ 15-ը, այլ 35-ը, այսինքն գրողների թիվը ուռճացված է ընդամենը տասնապատիկ, դրանից ի՞նչ է փոխվում՝ ընթերցողի հոգին այսուհետ չի՞ թափառելու խորանի անեզրական ծովում, խորանի առատությունն այլևս հետևանքը չէ՞ գրականության ներհակ մեր համայնավարական գործունեության կամ հակագրական կոլեկտիվ մաքառումի: Եվ ընդհանրապես ո՞ւմ է ուղղված չափանիշների անկման վերաբերյալ ժամանակ առ ժամանակ ժողովներում ու մամուլում հնչող ծեքծեքուն մտահոգությունը: Գոնե տիմար մեկը կա՞, որին հավատացնես, թե 35 «իսկականները» կարող են գրական բարձր չափանիշ թելադրել 315 գրասերներին, գրամոլներին և գրի անքանքար առաջամարտիկներին: Ո՞նց՝ «ֆայն բազմաց»-ն այլևս «ֆայն Աստծո»-ն չէ՞...

Բայց եթե, այնուամենայնիվ, անտաղանդներից յուրաքանչյուրն էլ անտաղանդ է յուրովի, այսինքն տաղանդավոր են ՀԳՄ բո-

Հ. Թումանյան

լոր 350 անդամները, իսկ մրցանակներն էլ շնորհվում են հեղինակներին և ոչ թե գրքերին, ուրեմն բոլոր առումներով նպաստ է մրցանակը, և նպաստառու են բոլորը: Ուրեմն և՝ գրքի հին ու նոր, լավ ու վատ չկա, հերթի են բոլորը:

Հարցն իր նախնական մերկությամբ այս է՝ եթե չլինեն ստեղծագործական միությունները, արվեստի և գրականության ասպարեզում խուրանը կավելանա՞, թե՞ կնվազի, թերիպակասավոր-չկայացած գործի համար շնորհված մրցանակը սատարո՞ւմ է սկսնակին, թե՞ վնասում, եթե կոռուպցիան մերժող բանաստեղծությունների մրցանակաբաշխություն է հայտարարվում, դա ֆեռնարկ է ընդդեմ կոռուպցիայի՞, թե՞ բանաստեղծության...

Ինչի՞ համար են, օրինակ, ՀԳՄ նախագահին փոխելու աշկարա ու ծածուկ ջանքերը, եթե կառույցը մնալու է անառիկ: Այն, ինչ «անարժանը» չի անում, «արժանավորը» անելո՞ւ է, թացը չորից ջոկելո՞ւ է, սրան-նրան ասելո՞ւ է՝ դու գրող չես... Միր ինչո՞ւ պիտի ասի, եթե վարչության նախագահ ընտրելիս ՀԳՄ 350 անդամներից յուրաքանչյուրը ժողովական մի քվե է, իսկ քվեն պարտադիր ու անպարտադիր չի լինում: Եվ եթե չի ասելու, ակնկալիքը ո՞րն է: Ճիշտ է, եթե նորընտիրը մի քիչ ալարկոտ եղավ ու խորշեց անբովանդակ միջոցառումներից, ՀԳՄ-ն պակաս արդյունավետությամբ կպայքարի գրող մարդու ասպվածահաճո մեծության դեմ: Դա էլ, իհարկե, քիչ բան չէ, բայց, այնուամենայնիվ, ՀԳՄ կառույցը ինչո՞ւ պիտի անշեռնմխելի մնա, որ «իսկական» գրողները ոգորումի թիրա՞խ ունենան, որ անբան նախագահով վնասագործե՞ն էկոլոգիական աղետները...

Իսկ եթե բան է պատահեց՝ կորովի մեկը եկավ ու Գրողների տան միջանցքներում ճեմողներին ասաց, թե ոչ մի դասական ու խոստումնալից գրողներ էլ չեք, ընդամենը ահել ու ջահել գրամոլներ եք, 315-ը թերիկունք չե՞ն համախմբվելու ու այդ գելի սիրտ կերածին թախտից գցեն: Շրաշ, անհապաղ, շուտափույթ,- վաղը արդահերթ համագումար է,- կառույցը չե՞ն հայտարարելու ազգային արժեք, իրենք իրենց՝ Կարմիր Վարդանի նահատակության ուխտի հավատավորներ, իսկ քաջարի բնապահպանին անվանարկեն

այնպես, որ թշվառականը երես չունենա մասնակցելու ընդդիմադիրների հանրահավաքին:

Չափազանցո՞ւմ եմ, խրացնո՞ւմ եմ գույները: Եթե կեղծիքը, երեսպաշտությունն ու ցինիզմը ապահովում են գրքի քննարկման մի լսարան, ուր հավաքվածներից և ոչ մեկը գաղափար չունի քննարկվող ու պանծացվող նյութից, եթե շախով-շուխով հանդես է կազմակերպվում գրական խուրանի լույս աշխարհ գալու կապակցությամբ, եթե... Սրանց ի՞նչն էի խրացնելու: Թե՞ խաչ ես հանելու երեսիդ ու ասես, որ նման բան լսած չկաս...

Մոլախոտը նազուկ չէ, տապտոր ու ստնտրուի հոգածության կարիք չունի, ինքն իր սերմը քամու բերանն է տալիս, հեսդ տարին կուզի անշրևային լինի, կուզի՝ չորային, ծլարշակում, զորանում է: Գրքի խուրանն էլ կենսունակ է իր «դառնաթախիծ» ընթերցողով, անցավոր չէ, որ երեսիդ ջրով մնաս ու համբերես, մինչև գնա պրծնես: Սրա անծայրածիր դաշտն էլ ցրտադիմացկուն-հրակայուն է: Եվ որ խորհրդային ռուս բանաստեղծն ասում էր, թե «Դու տաղանդավորին օգնիր, անտաղանդն իր ճամփան կգտնի», խոսքը գրականության շեֆերին ու խնամակալներին չէր ուղղում: Մեր ռազմավարական ընկերը դեմ էր առել կենդանի իրականությանը՝ սրտնեղում էր: Հիմա էլ մենք. խորհրդային իրականությունից հոգիներս ազատեցինք, մնացինք մեզանով, բայց հո կենդանի իրականությունից էլ չէինք անկախանալու: Խորհրդային տարիներին կոմիտասյան երգի համախումբ լսարան չէինք, հիմա էլ չենք: Միայն թե ռաբիսի դեմ վիապ պայքարը մտածել չտա, թե Կոմիտասի ժողովուրդը մենք չենք՝ մեր նախնիներն էին, որ հիմա չկան: Չէ, Կոմիտասն էլ է մշտենջենական, ռաբիս երգն էլ, մենք էլ Կոմիտասի ժողովուրդն ենք:

Այն տարիներին էլ, հիմա էլ հնազանդությունը խուրանին անհայրենիք մարդու վարք է: Դարբինը ե՞րբ է կռել, հյուսնը ե՞րբ է պոչել՝ թաքուցակ են սարքել, տվել հողվորի ձեռքը, որ իր արտը, բոստանը, ածուն մաքրի մոլախոտից, քաղհան անի: Հիմա որ մեզ կոմունիզմի դարբինները թաքուցակ չեն ժառանգել, թողել են անտառունակ մի կառույց, որ գրական միջակություններ է հավաքագրում ու կոտրում, խուրանի սերմեր է փռում արշակի ու պոեզիայի հողին՝ խուփաչք պիտի բանեցնե՞նք: Ինչների՞ս վրա ենք խանդավառ, լավա՞ծ բան է, որ հողվորը կանգնի մոլախոտից շնչահեղձ արտի դեմ ու սքանչանա: Մենք դա անում ենք. բոլոր ամբիոններից աչքալուսանք ենք հղում ընթերցողին, թե այսքան ու այսքան գիրք ենք հրատարակել: Չենք ասում, թե այդ հարյուրավոր հրատարակություններից քանիսը չեն խուրան: Եթե բուռն որոնումի պրոցես ընթացք է, թող որ խուրանն էլ արգասիք է քրտնաջան որոնումի, բայց հո չի՞ կարելի սաղմոսել խուրանն ու լծվել դրա անիտոր արտադրության գործին: Պիկասոն ասում էր՝ «Ես չեմ որոնում, ես գտնում եմ»: Մեր գնահատականն էլ մեր գործին, թվում է, հակառակը պիտի հավաստեր՝ «Մենք որոնում ենք, չենք գտնում»: Համարյա չենք գտնում: Բայց դա այդպես չէ, բանաձևը ճիշտ չի ներկայացնում մեզ և մեր հանապազօրյա ջանքը: Մենք չենք որոնում, խուրանը ստեղծագործական որոնումի վկայություն չէ և ոչ էլ ստեղծագործական ճախողումն է խուրան: Պիկասոն անընդհատ որոնում էր, անդադրում որոնումը ի վերուստ սահմանված իր ճակատագիրն էր, ինքը քայլում էր ճակատագրի գծած ճամփով և, ըստ հանճարի մանկական պարծենկոտության, գտնում էր՝ առանց որոնելու: ԳՄ-ն ստեղծագործական որոնումի չի կոչված, չի որոնում և չի գտնում, անում է այն, ինչը պարարտ հող է խուրանի տարածման:

Գրողությունը, հասկանալի է, երկնային շնորհ է, բայց հո Գրողների միությունը եղեմ չէ, որ այդ դրախտային պարտեզը կողպելու կամ այդ բուրաստանից քշվելու վախը Ադամից ու Եվայից հետո կաթվածահար անի գրողին: Ստեղծագործական միություններ հղացողների ու իրագործողների գլխավերևում երկինքը դատարկ էր, արվեստագետն իր երկնային ճամփի ճամփորդը չէր, խորհրդային գաղափարական ճակատում պարտադիր ծառայության զորակոչիկ էր: Ինչքան էլ չտեսնելու տաս՝ այն երևույթների մեջ, որոնց դեմ պայքարում էր ԳՄ-ն, նաև «ֆետով ազգային» գրականություն էր: (Պատահական չէ, որ այսօր ուզվում է, անգուսպ ուզվում է, որ Չարենցը ազգայնական եղած լինի և ոչ թե հեղափոխական): Խորհրդային Միությունը սպառվեց, հանուն էլ, ընդդեմն էլ հետը անէացան, իսկ ԳՄ-ն իր փուքաջան ու անֆանֆիր գործունեությամբ, թող որ ակամա, շարունակում է պայքարել գրականության դեմ, որն այսօր ոչ ֆետով է ազգային, ոչ էլ բովանդակությամբ սոցիալիստական: Ի՞նչ անհրաժեշտությամբ է գոյատևում, պատմական գործող հուշարձա՞ն է, մնացել է, որ վկայի հետևորդներիս սրբազան երկյուղածությո՞ւնը անցավորաց հիշատակին, թեթևացնում է գրողի տառապա՞նքը. ահա՛ ԳՄ-ի ցավազերծող հաբերը հակացուցված են գրողի երկունքի ցավերին, վնասում են պտղին:

Գրական ընթացքը հարկավորություն չունի ուղղորդվելու, և ոչ էլ դրա հնարը կա: Մի քիչ հուսահատ, մի քիչ ցինիկ մեր կենսափիլիսոփայությունը գրական չափանիշ է ֆետավորում, և այդ չափանիշով տաղանդներ ենք «հայտնաբերում»՝ ըստ Միության կոլեկտիվի անդամների թվաքանակի հետ կապված պահանջարկի: Նշանակված օրը և նշանակված ժամին: Մինչդեռ տաղանդը ունակ է ինքն իրեն տարաժամ հայտնաբերելու և ճանաչվելու առանց ՀԳՄ անդամատոմսի: Իսկ գրական մամուլը... Մալիցի խափշիկներն Աֆրիկայում ինչպե՞ս են գոյատևում՝ այդպես:

Ասածո պատի՞ժ է, պրծում չկա՞...

Ժամանակը մարդու ներսում է, դրսում չէ: Թող որ գրողը վարժվել է Գրողների տանը, սիրտ է՝ չի դիմանա, եթե դրա դռանը կողպեք տեսնի: Բարի՝ կողպեք, ուրեմն, պետք չէ, դուռը թող բաց մնա: Միայն թե ներսում Միություն չլինի, թե չէ հոտի գլուխը ոնց էլ շրջես՝ կաղ ոչխարներն առաջ են ընկնելու: Ներսում ՀԳՄ հիմնադրամը կնստի, կգործի շուրջօրյա ակումբը՝ նարդի, շախմատ, սուրճ, սրահի պատին էլ, աչքի ընկնող տեղում, համակարգչի մեծ-մեծ տառերով գրված-խփված կլինի՝ «Դրսից օդի բերելը արգելվում է»: Չի խանգարի՝ արգելեն-չարգելեն բերվելու է. կիմեն, գոհություն կիջնի վրաները, կսկսեն իրար գովել... Երևի թե ՀԳՄ նախագահի աթոռն էլ հարկավոր բան է, բայց Գրողների տանը չէ՝ հեռու մի տեղ կդրվի, նախագահն էլ օժտված կլինի աստվածային զորությամբ՝ ինքը գրողին երկինքներից կտեսնի, իսկ գրողը նրան՝ ոչ...

Սրա վերջն ի՞նչ է լինելու:

Խորհրդային տարիներին սրամտում էին՝ «Վերջից եկողներ կան, այնտեղ էլ մի բան չի...»: Այսօրվա մասի՞ն են ասել, ճիշտ են ասել՝ ոչ մի բան էլ չի փոխվելու: Այնպես որ՝ կուչուչիգ մի ընկնավորիր ու հարայ մի տուր, Միությունը չքանդեցին...

Ասացի՝ պարապ զրույց է:

ԴՐՕՇԱԿ
100 տարի առաջ

№№ 7—9 (213) XX ՏԱՐԻ ՕՈՒԼԻՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Ցինիզմի ծայրակէտը

Դուման, Սենատ, Դատարան, Վարչութիւն – բոլո՜ր, բոլոր հաստատութիւնները գետնատարած փռում են ցարիզմի ոտքերի տակ և մի եղկելի, շնային ստրկամտութեամբ կատարում են նրա կամքը, նրա քմահաճ հրահանգները ամեն տեղ, կեանքի բոլոր ասպարէզներում:

Ահա և հայ-թուրքական աշխարհադղորդ ողբերգութեան «դատաստանական» ֆինալը, վախճանակէտը... Սենատոր Կուզմինսկին իր կատակ «քննութիւնից» յետոյ մեղադրանքի վճիռ էր արձակել Բագուի ոճրագործ պաշտօնէութեան մի քանի ներկայացուցիչների դէմ: Կառավարիչ Սենատը եկաւ ահա և հանդիսաւոր կերպով բեկանեց այդ վճիռը...

Ո՜չ ոք մեղաւոր չէ: Մեղաւոր են միայն հայերը: Ոստիկանութիւնը եղել է իր կոչման բարձրութեան վրայ, պատժելով «յեղափոխական հայերին»: Նիկոլա 2-ի Սենատը ցաւում է միայն, որ թուրք խուժանը և նրա ներշնչող-ոստիկանութիւնը չեն կարողացել լաւ պատժել յեղափոխականներին...

Հին ռէժիմի հայատեաց չարագործներին փաստաբանում է տխրահռչակ արքայապաշտ Զամիսլօվսկի և ահա նրա բովանդակ փաստաբանութեան հիւթը, իր մի քանի խօսքերի մէջ.

«Թուրքերը կոտորում են հայերին՝ նրանց յեղափոխական տրամադրութեան պատճառով... Նակաշիձէի սպանուելուց յետոյ, նրա ընտանիքը արժանացաւ բարձրագոյն հեռագրի, որի մէջ նա որակուած էր «իր պարտքին անձնուէր» բառերով: Այդ բառերն արդէն ապացոյց են, որ Նակաշիձէն վեր էր ամեն կասկածից. Իսկ նա ինքը անմեղ էր ճանաչել դատապարտեալ պաշտօնեաներին». Ergo...

Ցինիզմը ավելի հեռուն գնալ չէր կարող:

Սև-հարիւրակեան կառավարութիւնը շարունակում է իր խրախճանները, յաղթանակի գինովութեան մէջ: Բայց կը գայ, յուսո՜վ ենք, նաև հատուցման ժամը...

Մուշեղ Միքայելյան, «Ազատամարտ»

Երևան, 2010, 312 էջ



Զուգադիպությո՞ւն է:

Երբ մայր հայրենիքում վերահաստատված Դաշնակցությունն սկսեց իր բառուքանը տարածել նորանկախ երկրի կենարար տարածքում, Մուշեղ Միքայելյանն ու «Ազատամարտը» առաջիններն էին, որ հայաստանցու աչքի առաջ, օր-օրի, տնաջան մեղվի պես հալածում էին ազգային գաղափարների վրա իջած յոթանասունամյա փոշին:

Հետո այդ անդուլ աշխատանքին ավելացավ նորը, ավելի ծանրը, ավելի թանձրը ու ավելի անհասկանալին: Ժողովրդին պետք էր ասել, ամեն օր պետք էր ասել, որ սա չէ այն անկախությունը, որ հայ մարդը երազել է, որ մտովի գծել է իր ազգային-ազատագրական պայքարի ակունքներից սկսած, մինչև Արցախի հերոսամարտ, 1918 թ. Հայաստանի Հանրա-

ՈՒԺԵՂ ԲՌՈՒՆՑՔԻՆ ՈՒԺԵՂ ԹԻԿՈՒՆՔ Է ՊԵՏՔ

Մինչ մենք սերտում ենք դրամի ու դրամաշորթության դասերը, Արցախը մնում է անընկճելի, անխորտակ, հակառակ քանակական անբարենպաստ համեմատության, հակառակ թշնամու շարքերում բազմապիսի վարձկանների և այլ մասնագետների ներկայության, հակառակ ռազմական գիտությունների հին ու նոր տեսություններին: Անշուշտ ուրախանում ենք ու հպարտանում Արցախի մեր ռազմիկների հաջողությունների լուրերն առնելով: Բայց արդյո՞ք ունենք այդ իրավունքը: Թիկունքում լինելն ամոթ չէ, եթե այն իսկապես արցախյան պողպատյա բռունցքին վայել թիկունք է, հանձնառու ու կազմակերպ: Թշնամին, ինչպես միշտ, մեծաքանակ է, իսկ մենք փաստորեն մենակ: Մենակ ենք մեր լինել-չլինելու դատաստանի առաջ: Մեր հույսն ու ապավենը մեր բազուկն է, այն անընկճելի պողպատյա բռունցքը, որ այսօր հերթական անգամ թշնամուն հասկացնում է, որ հայ ժողովուրդը հայ ժողովուրդ է իր պատմությամբ ու ներկայով, և պատմությունն այդ սովորեցնում է նախ և առաջ ապավինել սեփական ուժերին, որ նշանակում է մի մարդու պես դիմակայել թշնամուն: Թիկունքն ուժեղացնելու զանգը վաղուց է հնչել, մինչդեռ մենք շարունակում ենք քարշ տալ մեր գորշ առօրյան, երևի հուսալով, որ փոթորկի այս ալիքն էլ, ինչպես իր նախորդները, կանցնի ապարդյուն: Ոչ, այս մեկը վճռորոշ է ու ճակատագրական: Այս մեկը Սարդարապատ է, հայ ժողովուրդ:

«Ազատամարտ»
1994 թ., Թիվ 3, հունվար

ոլեսությունից մինչև նորանկախ Հայաստան: Եվ դարձյալ Մուշեղն ու «Ազատամարտը» առաջինն էին:

Եվ դարձյալ առաջինն էին սոցիալական խնդիրներ վեր հանելիս: Այն օրերին, երբ մութ էր ու ցուրտ, եւ մութ էր ու ցուրտ, որովհետև օրվա իշխանություններն իրենց անճարակությունն ու թալանչիական էությունը փորձում էին թաքցնել զուտ արտաքին մարտահրավերների թանձր քողի տակ, Մուշեղ Միքայելյանն ու «Ազատամարտը» առաջինն էին, որ խոսում էին հայ մարդու հոգսից, ոտքի կանգնելու, մեջքը շտկելու, մեջքը շտկելու հետ էլ հայրենիքը զորացնելու, եղածը պահելու, պահպանելու ան-հրաժեշտության մասին:

Չորս տարի լինել առաջինը այս դժվար գործում, չորս տարի ամեն օր լուծ քաշել, էն էլ՝ այսպիսի թանկ ու ծանր լուծ:

Կարդացեք, վերապրեք այն օրերը, ձեզ, ինչպես հայելու մեջ, տեսեք այդ օրերում: Այս գրքում են զետեղված նաև Մուշեղ Միքայելյանն ու «Ազատամարտը»՝ որպես այրուձի, որպես անխառն ճշմարտություն մեր ապրած 1991-1994 տարիների մասին:

Զուգադիպությո՞ւն է:

Այս գիրքը ՀՅԴ «Դրօշակ» պաշտոնաթերթի մատենաշարի երախայրիքն է: Այստեղ էլ Մուշեղ Միքայելյանն ու «Ազատամարտը» առաջինն են:

Առաջինը լինելը երևի ճակատագիր է, որ ի վերուստ տրվում է մարդուն ու նրա գործին: Ու երբ այդ մարդն ու գործը նաև միախառնված են, ձուլված, ինչպես միաձույլ մետաղը, մեզ մնում է միայն զոհանալ՝ ապրել ենք նրանց կողքին ու նրանց հետ:

Պատահական չէ, որ Մուշեղ Միքայելյանի ու «Ազատամարտի» մասին ամեն մի

խոսք, ամեն մի հուշ նաև հուզմունք է, սրտանց բառ ու վաստակած մեծարանք, բայց, ափսոս, նաև անհուն կշտամբանք, որ խտացված է այդ խոսքի բայերի անցյալական ժամանակաձևերում: Այդպիսի մի խոսք է գրքի առաջաբանը, որի հեղինակը արձակագիր Ռուբեն Հովսեփյանն է:

Մեր Մուշեղը՝ ուրիշ էլ ի՞նչ ասես:

Էդիկ Անդրեասյան

Մեր Մուշեղը

Թերությո՞ւն է հռետոր չլինելը՝ չգիտեմ, բայց ամբիոնից խուսափելը, երբ հռետոր չլինելու գիտակցությունն ունես, համոզված եմ, առաքինություն է: Առաքինություն է նաև հակառակը՝ սեփական ուժի ու կարողության գիտակցումը: Մուշեղը ամբիոնին երբեք չմոտեցավ, բայց հրապարակախոսի նրա սուր գրիչը և դաշնակցականի հսկայ աշխարհընկալումը ուղղորդեցին նրան լրագրողական ասպարեզ, որտեղ նոր-նոր էր ծիլ տալիս ազատ խոսքի բանտված սերմը: Լրագիրը, այն էլ քաղաքական-հասարակականը, այն էլ պաշտոնականը նույնպես ամբիոն է՝ տասակի պարտա- դրանքով, թեև ավելի լուրջ ու ծանրակշիռ, քան միտինգայինը, հռետորայինը: Բայց Մուշեղն իր անուն-ազգանունով այս ամբիոնին էլ չմոտեցավ: Նա պարզապես ձուլվեց այդ ամբիոնին և ինքը վերածվեց ամբիոնի: Թերթի 1991 թվականի մարտի ութից մինչև Դաշնակցության կասեցումը «Ազատամարտ» պաշտոնաթերթի համարները, կարդացեք հատկապես քաղաքական քրոնիկոն հանդիսացող խմբագրականները և դուք կհաղորդակցվեք տարրալուծում կոչվող զարմանալի այն երևույթին, ինչը բնության մեջ, թերևս, ամենուր է, սակայն մարդկային հարաբերություններում՝ հազվադեպ: Թերթեք արդեն պատմություն դարձած այդ համարները, կարդացեք այդ համարների պարունակությունը և կտեսնեք, որ Մուշեղը դրանց մեջ թե՛ կա և թե՛ չկա: Չկա՛ նրա անուն-ազգանունը, ստորագրությունը և ոչ մի խմբագրականի, հոդվածի տակ: Բայց նա կա թե՛ խմբա- գրականներում, թե՛ հոդվածներում, թե՛ տեղեկատու տողերում, թե՛ ձևավորման հաստ ու բարակ գծերում: Նրան ճանաչողը, հի-շողը կզգա այն շունչն ու հանգը, այն համն ու հոտը, այն սրամտությունն ու սարկազմը, հարցականներով՝ պատասխաններ հուշող ոճը, որ միայն Մուշեղինն էր՝ Միքայելյան Մուշեղինը:

Հնարավոր է, որ ոչ բոլոր խմբագրականներն է գրել Մուշեղ Միքայելյանը և եթե կան այդպիսիք, ապա դրանց մեջ էլ է Մուշեղը այնքան ներկա, որքան իր հեղինակածներում:

Նա տարրալուծված էր «Ազատամարտի» մեջ: Նա «Ազատամարտի» աղն էր: Եվ ոչ միայն «Ազատամարտի»:

Եվ թող նա մեզ ների, որ սերունդների համար, իր հիշատակը չկորցնելու համար՝ փորձել ենք տարրալուծված այդ լուծույթից բյուրեղ-բյուրեղ անջատել ու այս գրքի կազմին դրոշմել իր անունը կազմող հայերեն տառերը՝ Մուշեղ Միքայելյան:

Ռուբեն Հովսեփյան

Սարո ԿԱԼԵՆՑ







Ծնվել է 1946թ. Երևանում: Ավարտել է Փ. Թերլեմեզյանի նկարչական ուսումնարանը, Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտը, Տալինի Գեղարվեստի ինստիտուտը:

1971-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է: 1999-2002 թվականներին եղել է Հայաստանի նկարիչների միության քարտուղար:

1991 թվականից դասավանդում է Երևանի պետական գեղարվեստի ակադեմիայում, ղեկավարում է գունանկարի և գծանկարի միասնական ամբիոնը:

2009-ին հիմնադրել է «Կալենց» մշակութային հիմնադրամը:

Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում, Մոնրեալում, Մոսկվայում, Նիկոզիայում և այլուր:

ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ







ԴՐՕՇԱԿ